ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ուսումնական նյութեր և առաջադրանքներ

Կազմող՝ Լիլիթ Գրիգորյան

2021

ԴԱՍԻ ԹԵՄԱ. ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի «Համառոտ ակնարկ հայ գրականության սկզբնավորման վերաբերյալ» դասանյութը, էջ 4-12 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

1. Ներկայացրե՛ք դասանյութի հիմնական գաղափարը:

2. Կազմե՛ք գրականության շրջափուլերի աղյուսակ՝ ներկայացնելով այդ փուլերում ստեղծագործողներին:

3 «Վեննի դիագրամ»-ով ներկայացրե՛ք բանահյուսության և գրականության հիմնական տարբերությունները:

4. Ներկայացրե՛ք գրերի գյուտի պատմական հիմքերը և ստեղծման անհրաժեշտությունը:

5. Ըստ ժամանակագրության՝ աղյուսակով ներկայացրե՛ք միջնադարի նշանավոր դեմքերն և նրանց ծավալած գործունեությունը:

6. Ներկայացրե՛ք գրերի գյուտի ստեղծման ժամանակաշրջանը:

ԴԱՍԻ ԹԵՄԱ. ԿՈՐՅՈՒՆԻ «ՎԱՐՔ ՄԱՇՏՈՑԻ» ԵՐԿԸ, ԳՐԵՐԻ ԳՅՈՒՏԸ



Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի Կորյունի «Վարք Մաշտոցի» երկի և գրերի գյուտի վերաբերյալ դասանյութը, էջ 13-17 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք դասանյութի բովանդակությունը՝ մեկնաբանելով՝ պատմական իրադարձությունները՝ բերելով օրինակներ:

բ/ Վերլուծե՛ք գրերի գյուտը պատմության համատեքստում:

գ/ Գնահատե՛ք Մեսրոպ Մաշտոցի ծավալած գործունեությունը որպես ականատես:

ԴԱՍԻ ԹԵՄԱ. ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ: 5-ՐԴ ԴԱՐԻ ՊԱՏՄԻՉՆԵՐ

Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի «Հայ պատմագրություն: 5-րդ դարի պատմիչներ» թեմայի վերաբերյալ դասանյութը, էջ 18-26 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք պատմիչների կենսագրությունները և գործունեությունները՝ ըստ փաստերի և հուշագրության:

բ/ Ներկայացրե՛ք պատմիչների ստեղծագործությունը՝ ըստ դասագրքում ներկայացված նյութերի:

գ/ Գնահատե՛ք գրող-քաղաքացու կատարած աշխատանք՝ որպես ինքնաճանաչման և ազգային արժեքների պահպանում՝ բերելով փաստեր:



ԴԱՍԻ ԹԵՄԱ. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԿՅԱՆՔԸ, ԱՊՐԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ, «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի Մովսես Խորենացու կյանքը, ապրած ժամանակաշրջանը, «Հայոց պատմություն» երկի ընդհանուր բնութագիրը թեմայի վերաբերյալ դասանյութը, էջ 27-35 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ:

ա/ Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:

բ/ Սահիկաշարով ներկայացրե՛ք աշխատության կառուցվածքը՝ գրելով յուրաքանչյուր հատվածի մեջ հեղինակի արծարծած խնդիրները:

գ/ Ներկայացրե՛ք Մովսես Խորենացու կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:

դ/ Մեկնաբանե՛ք՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին՝ բերելով օրինակներ:

ե/ Արժևորե՛ք հեղինակի կատարած դերը ազգային մշակութային արժեքների պահպանման գործում՝ օրինակներով հիմնավորելով մեկնաբանությունը:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, ԱՌԱՍՊԵԼՆԵՐ

Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի «Մովսես Խորենացի, Առասպել» թեմայի վերաբերյալ դասանյութը, էջ 36-35 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ:

ա/ Վերլուծե՛ք առասպելներում առկա կոնֆլիկտները և հեղինակի առաջարկած լուծումները՝ բերելով օրինակներ:

բ/ Բացատրե՛ք՝ ինչու և ինչպես է գրողը ներկայացնում տվյալ ժամանակաշրջանը, միջավայրը և կերպարներին՝ հիմնավորելով օրինակներով:

գ/ «Վեննի դիագրամ»-ով ներկայացրե՛ք յուաքանչյուր առասպելի կերպարների համեմատական բնութագիրը, նրանց վարքագիծը:

դ/ Առասպելներում ներկայացված իրադարձությունները համեմատե՛ք պատմական նույն դարաշրջանի հետ՝ բերելով օրինակներ:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ. ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ, «ՈՂԲ» ՀԱՏՎԱԾԸ

Կարդացե՛ք «Ողբ»-ի բնագիրը և կատարե՛ք կից առաջադրանքները:

«ՈՂԲ» ՀԱՏՎԱԾ

Ողբում եմ քեզ, հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնդ, որովհետև վերացան թագավորդ ու քահանադ, խորհրդականդ ու ուսուցանողդ, վրդովվեց խաղաղությունը, արմատացավ անկարգությունը, խախտվեց ուղղափառությունը, հիմնավորվեց տգիտությամբ չարափառությունը:

Խղճում եմ քեզ, Հայաստանյայց եկեղեցիդ բեմիդ բարեկարգությունից անշքացած, քաջ հովվից և հովվակցից զրկված: Այլևս չեմ տեսնում քո բանավոր հոտը դալար տեղում և հանգիստ ջրերի մոտ սնվելիս և ոչ էլ փարախի մեջ հավաքված՝ գայլերից զգուշանալու համար, այլ ցիրուցան եղած անապատներում և գահավեժ տեղերում:

Երանի՜ առաջին և երկրորդ փոփոխություններին, որովհետև եղավ մի ժամանակ, որ փե-սան և խաչեղբայրը հեռացան, բայց դու, հարսդ, համբերեցիր, ողջախոհությամբ պահելով ամուսնությունդ: Մյուս անգամ էլ, երբ մեկը սիրեկանի նման հանդգնաբար հարձակվեց քո անարատ առագաստի վրա, դու՝ հարսդ, չապականվեցիր, թեպետ բռնի կերպով փեսան վտարվեց, երբ ընդվզող որդիները իրենց ծնողին անարգեցին, նման այն խորթերին, որոնք արժանապես անարգում են օտար հորը և եկվոր խորթ հորը, բայց դու այս անգամ էլ ամեն բանով լքված չմնացիր, ակնկալելով քո (փեսայի) դարձին, դու հովվակցի ձեռքով մանուկներիդ փայփայեցիր, ոչ ինչպես տեգերոջ,այլ ինչպես նույն զավակների տեր երկրորդ

հոր ձեռքով: Իսկ այս երրորդ անգամ հեռանալիս՝ այլևս չկա դարձի ակնկալություն, որովհետև մարմ-նից բաժանվեց իր ընկերոջ ու գործակցի հետ:

Նրանց համար լավ է Քրիստոսի հետ բնակվել, Աբրահամի գոգում հանգչել և հրեշտակնե-րի խմբերը տեսնել: Բայց դու ես, որ այրիությանդ մեջ առանց հոգացողի մնացիր, և մենք ենք խղճալի, որ զրկվեցինք հայրական խնամակալությունից: Որովհետև այնպես չէ (մեր վիճակը), ինչպես հնում այն (իսրայելացիների) ժողովուրդը, այլ մեր թշվառությունն ավելի է: Որովհետև Մովսեսը վերացվում է, բայց Հեսուն չի հաջորդում, որ առաջնորդի դեպի Ավետ-յաց երկիրը: Ռոբովամն իր ժողովրդից մերժվեց, բայց նրան փոխարինեց Նաբատի որդին, և աստծու մարդուն ոչ թե առյուծը ոչնչացրեց, այլ հիսուն տարիքը: Եղիան համբարձվեց, բայց Եղիսեն չմնաց կրկնակի հոգով՝ Հեուեին օծելու, այլ դեռ Ազայելն էլ հրավիրվեց Իսրա- յելին կոտորելու, Սեդեկիան գերի տարվեց, բայց չկա Զորաբաբելը, որ տերությունը նորոգի:

Անտիոքոսը հարկադրում է թողնել հայրենի կրոնը, բայց Մադաթիան չի դիմադրում, պա-տերազմը մեզ շուրջանակի պաշարել է, բայց Մակաբեն չի փրկում: Այժմ ներսը կռիվներ, դրսից արհավիրք, արհավիրք հեթանոսների կողմից և կռիվներ հերձվածողների կողմից, և չկա այն խորհրդականը, որ խրատեր և պատերազմի պատրաստեր:

Ավա՜ղ այս զրկանքներին, ավա՜ղ այս թշվառ պատմությանը: Ի՜նչպես դիմանամ այս ցա-վե¬րին, ի՜նչպես ամրապնդեմ միտքս ու լեզուս և հայրերիս հատուցեմ խոսքով ծնունդի և սնունդի փոխարեն: Որովհետև նրանք ինձ ծնեցին և սնեցին իրենց տված ուսումով և ուրիշ-ների մոտ ուղարկեցին կատարելագործվելու: Եվ մինչ նրանք սպասում էին մեր դարձին, որ փառավորվեին իմ ամենիմաստ գիտությամբ և լիակատար պատրաստությամբ, և մենք էլ Բյուզանդիայից շտապ-շտապ ունեինք հարսանիքում պարել, խիզախ և արագ շարժում-ներով, առագաստի երգեր երգել, այժմ, այդ ուրախության փոխարեն, գերեզմանի վրա ողբեր եմ ասում, ողորմելի հառաչելով, նույնիսկ չհասցրի տեսնել նրանց աչքերի փակվելը, լսել նրանց վերջին ձայնն ու օրհնությունը:

Այսպիսի վշտով խեղդվում եմ, մեր հոր կարոտով մաշվում: Ո՞ւր է այն քաղցր աչքերի հան-դարտությունը ուղիղների համար և ահավորությունը շեղվածների համար, ո՞ւր է այն զվարթ շրթունքների ժպիտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացակամ սիրտը, որ հետևողներ է գրավում, ո՞ւր է երկայն ճանապարհները հեշտացնող հույսը, նեղություններից հանգստացողը, կորավ ժողովուրդը, ծածկվեց նավահանգիստը, լքեց

լքեց օգնականը, լռեց խրախուսիչ ձայնը:

Ո՞վ այսուհետև պետք է հարգի մեր ուսումը, ո՞վ պետք է ուրախանա իր՝ աշակերտիս առաջադիմությամբ, ո՞վ հայրական զվարճությունը պիտի արտահայտի՝ մասամբ իր որդուց հաղթվելով: Ո՞վ պետք է զսպի առողջ վարդապետությանը հակառակ դուրս եկողների հանդգնությունը, որոնք ամեն բանով քանդված ու քայքայված շատ ուսուցիչներ են փոփոխում և բազմաթիվ գրքեր, ինչպես ասաց հայրերից մեկը, ամեն խոսքի առթիվ նրանք հավասարապես նեղանում են, և մարդկանց համար չար օրինակ են դարձնում մեզ ծաղրելն ու արհամարհելը, իբրև անհաստատ և որևէ պիտանի արվեստից զուրկ: Ո՜վ պետք է նրանց պապանձեցնի սաստելով և մեզ սփոփի գովելով և չափ դնի խոսքի և լռության:

Երբ մտածում եմ այս բաների մասին, սիրտս հառաչում և արտասվում է և ցանկանում եմ տխրալից և սգավոր խոսք ասել: Եվ չգիտեմ ի՞նչպես հորինեմ իմ ողբը, և կամ ո՞ւմ արտասվեմ. արդյոք իմ թշվառ մանուկ թագավորի՞ն, որ վատթար խորհրդակցությամբ իր ցեղով հանդերձ դեն նետվեց և նախքան մահով մեռնելը անարգաբար աթոռից կործանվեց, թե ինձ, որի գլխից վերցվեց փառավորող գեղեցիկ կյանքին օգտակար պսակը, արդյոք իմ հո՞րն ու քահանայապետին, այն վսեմ մտքին, որ ուր գնում, տանում էր կատարյալ խոս-քը, որով կառավարում էր և բարեկարգում, և սանձերը բուռը հավաքած՝ ուղղություն էր տալիս դեմքերին ու սանձահարում էր օտարոտի լեզուները, թե ինձ, նրա հոգու խանդից զրկվածիս ու տնանկիս, արդյոք իմ ծնողի՞ն, այն վարդապետության աղբյուրը, որ ոռոգում էր արդարությունը և իբրև հեղեղ դուրս էր քշում ամբարշտությունը, թե ինձ, նրա խրատ-ները խմելու ծարավից ցամաքածիս ու թառամածիս, արդյոք մեր երկրին, արդեն եկա՞ծ աղետները, թե ապագայում սպասվողները:

Ո՞վ մեզ այս բաներում ճառակից կլինի՝ մասնակցելով մեր տրտմությանը, ո՞վ մեզ կընկերա ցավակցելով մեր ողբին, կամ արձանների վրա փորագրելու: Զարթի՛ր, Երեմիա, զարթի՛ր և մարգարեանալով հանդերձ ողբա այն, ինչ թշվառություններ որ կրեցինք և ինչ պիտի կրենք գուշակիր, որ տգետ հովիվներ պետք է երևան գան, ինչպես (գուշակեց) Զաքարիասը իսրայելացիների համար:

Ուսուցիչները տխմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատիվ գտած և ոչ աստծուց կոչված, փողով ընտրված և ոչ սուրբ հոգով, ոսկեսեր, նախանձոտ, թողած հեզությունը, որի մեջ աստված է բնակվում, և գայլ դարձած գիշատում են իրենց հոտերը:

Կրոնավորները կեղծավոր, ցուցամոլ, սնափառ, պատվամոլ, քան թե աստվածասեր: Վիճակավորները հպարտ, դատարկապորտ, դատարկախոս, ծույլ, գիտություններն ու վարդապետական գրվածքներն ատող, առևտուր և կատակերգություններ սիրող:

Աշակերտները սովորելու մեջ ծույլ, սովորեցնելու մեջ փութաջան, որոնք դեռ չսովորած՝ աստվածաբան են:

Աշխարհականները ամբարտավան, ստահակ, մեծախոս, աշխատանքից խուսափող, արբեցող, վնասակար, ժառանգությունից փախչող:

Զինվորականները անարի, պարծենկոտ, զենք ատող, ծույլ, ցանկասեր, թուլամորթ, կողոպտիչ, գինեմոլ, ելուզակ, ավազակներին համաբարո:

Իշխանները ապստամբ, գողերին գողակից, կաշառակեր, կծծի, ժլատ, ագահ, հափշտակող, երկիր ավերող, աղտեղասեր, ստրուկներին համախոհ:

Դատավորները տմարդի, ստախոս, խաբող, կաշառակեր, իրավունքը չպաշտպանող, անկայուն, ընդդիմացող:

Եվ առհասարակ սերն ու ամոթը ամենքից վերացած:

Եվ ի՞նչ կա այս բոլորի դիմաց, եթե ոչ այն, որ աստված մեզ անտես է արել, և տարրերը փոխել են իրենց բնույթը, գարունը երաշտացած, ամառը սաստիկ անձրևային, աշունը ձմեռ դարձած, ձմեռը սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև: Քամիները բքաբեր ու խորշակաբեր, ցավեր տարածող, ամպերը կայծակներ թափող, կարկտաբեր. անձրևներն անժամանակ և անօգուտ, եղանակը դաժան, եղյամաբեր. ջրերի ավելանալը անօգուտ, իսկ պակասելը՝ չափազանց. հողի պտուղների անբերրիություն և անասունների անաճելություն, այլև երկրաշարժեր և սասանումներ: Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե ամբարիշտներին խաղաղություն չկա:

Որովհետև (մեզ) տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, որոնք ծանր, դժվարակիր բեռ-ներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս, կառավարիչները կարգ չեն պահպա-նում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները զորացած, հավատը ծախսվում է այս ունայն կյանքի համար: Ավազակներ են գալիս անհատնում և շատ կողմերից, տները թալանվում են, ստացվածքները հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ:

Աստվածապաշտությունը մոռացված է, և կա դժոխքի ակնկալություն:
Սրանից թող փրկի Քրիստոս աստված մեզ և բոլորին, որոնք ճշմարտությամբ երկրպագում են նրան: Նրան փա՛ռք բոլոր արարածներից, ամեն:

Առաջադրանքներ:

ա/ Ստեղծագործաբար վերաշարադրե՛ք ողբի բովանդակությունը՝ նորովի կիրառելով տվյալ տեքստի ընտրած արտահայտչամիջոցները:
բ/ Ուսումնասիրե՛ք և ներկայացրե՛ք գրողի կենսագրության և «Ողբ»-ի միջև առկա կապերը:
գ/ «Ողբ»-ից դուրս գրե՛ք բոլոր այն մերժելի, կործանարար գծերը, որոնք թվարկում է Խորենացին:
դ/ « Ողբ»-ից դուրս գրե՛ք այն տողերը, որոնք խիստ արդիական են:
ե/ Գրե՛ք շարադրություն «Ինչպիսի՞ն կուզենար տեսնել իր ազգը Խորենացին»:
զ/ Ապացուցե՛ք «Ողբի» արդիականությունը՝ բերելով հիմնավոր փաստեր:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ. ԱՌԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ: ՄԽԻԹԱՐ ԳՈՇ



Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի «Առակագրություն: Մխիթար Գոշ» դասանյութը, էջ 76-79 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք Մխիթար Գոշի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:

ա/ Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:

Կարդացե՛ք «Բամբակենին ու Սոսին», «Ձկները և նրանց թագավորը» առակները և կատարե՛ք կից առաջադրանքները:

ԲԱՄԲԱԿԵՆԻՆ ԵՎ ՍՈՍԻՆ

Սոսու մերձակայքում երկրագործները ոռոգում էին բամբակի արտերը և պատվիրում միմյանց զգուշանալ, որ չտրորեն բամբակի ծառերը: Լսելով, որ բամբակենուն ծառ կոչեցին, սոսին բարկացավ ու ասաց.

– Ինչպե՞ս է դա ինձ հավասար ծառ կոչվում, քանզի ես այսքան հաստ ու բարձր եմ, մեծ էլ տեղ եմ գրավում:

Եվ բամբակենին լսելի կերպով, առանց երկմտելու պատասխան տվեց, ասելով.

– Բարձր ես ու հաստ, բայց օգտակար չես: Ո՛չ շինվածքի, ո՛չ պտղաբերության և ո՛չ էլ վառելու համար ես գովելի: Թանձր ստվեր ունենալով, ավելի բամբասանքի ես արժանանում, քան գովեստի: Իսկ ես, թեպետ նվաստ ու տկար, բայց օգտակար եմ ոչ միայն հարուստների, այլև աղքատների համար: Խնամելու, քաղելու, գործելու դեպքում ոչխարների բրդի, վուշի, շերամի մետաքսի նման դառնում եմ հագուստ: Խոզակաղինից բացի, դու այլ բան բոլորովին չես տալիս:

Այսպես նախատվելով բամբակենուց, սոսին լռեց:

Սնոտի և պարծենկոտ մարդկանց է լռեցնում առակս, նրանց, որ ունեն տեսք ու հասակ և ապրում են անօգուտ կյանքով, մյուսներին, որ արհամարհում են տկարներին ու հասակով կարճերին, որոնք, սակայն, շատ բաներում պիտանի են ու օգտակար:

ՁԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԹԱԳԱՎՈՐԸ

Ձկները մեղադրվեցին իրենց թագավորից.

– Ինչո՞ւ եք ուտում ձեզնից մանր ձկներին: Համարձակություն ստանալով ձկները պատասխանում են.

– Որովհետև քեզնից սովորեցինք, շատերը եկան քեզ երկրպագելու, և կլանելով՝ քեզ կերակուր դարձրիր:

Ըստ այդմ իրենք ևս ավելի հանդուգն եղան:

Առակս հանդիմանում է, որ ոչ թե խոսքով, այլ գործով պետք է խրատող լինել:

Առաջադրանքներ:

ա/ Ստեղծագործաբար վերաշարադրե՛ք առակների բովանդակությունը՝ վերլուծելով առակներում ներկայացված բարոյախոսությունը:

բ/ Առակները ներկայացրե՛ք նկարի տեսքով:

գ/ Ներկայացրե՛ք Մխիթար Գոշի լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ:

դ/ Համեմատե՛ք և համադրե՛ք առակների կերպարներին և իրական կյանքում հանդիպող մարդկաց՝ բերելով օրինակներ:

Կարդացե՛ք «Արջն ու մրջյունը», «Աստղերն ու լուսինը», «Քահանան ու ավազակը» առակները և կատարե՛ք կից առաջադրանքները:

ԱՐՋՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Արջը փորում էր մրջյունի բույնը և լեզվով հավաքում նրանց ու ուտում: Մրջյունը նրան սպանելու հնարը գտավ: Գնալով պիծակի, իշամեղվի, մժեղի, շնաճանճի, կրետի և սրանց նմանների մոտ, խնդրում է, որ իբրև ազգականներ, օգնեն իրեն: Սրանք կարեկցելով՝ հարվածում են արջի աչքերին ու ականջներին: Արջը քարին է խփում գլուխը, որը նեխվում է, և որդեր են ծնվում մեջը: Ցավի սաստկությունից արջը, բերանը բանալով՝ գոռում է: Իսկ միջատները, մտնելով փորը, ծակծկում են նրա աղիքները: Արջը նեղվելով, դիմում է հոսող ջրին և, չափից ավելի սուզվելով մեջը, խեղդվում:

ԱՍՏՂԵՐՆ ՈՒ ԼՈՒՍԻՆԸ

Մի անգամ աստղերը հավաքվեցին իմի, և նրանցից ամենածերերն ասեցին.

- Մենք բազում ենք ու շատ: Ուրեմն ինչու՞ չենք կարող լուսավորել ցերեկն ու գիշերը արեգակի ու լուսնի նման:

- Որովհետև միաբանությամբ չենք վարվում,-պատասխանեց մեկը:

Եվ որոշեցին նախ հալածել ու փախցնել արեգակին: Բայց երբ լուսինը ծագեց, հաղթվելով նրանից՝ աստղերն ասացին.

- Եթե մենք լուսնի լույսից այսպես աղոտացանք, ապա ի՞նչ կլինենք, երբ արևը ծագի:

Զղջացին աստղերը և խոստովանեցին իրենց պարտությունը:

ՔԱՀԱՆԱՆ ՈՒ ԱՎԱԶԱԿԸ

Ավազակը մի քահանայի բռնելով կամենում էր սպանել նրան: Քահանան ուժ առավ, հաղթեց ավազակին և, ինչպես պետք է, սկսեց տանջել նրան:

Ավազակն աղաչում էր և ասում.

-Չէ՞ որ քահանա ես դու և միշտ ասում ես «խաղաղություն ամենեցուն» ու սրա նման շատ բաներ, ուրեմն ինչու՞ ես տանջում ու չարչարում ինձ:

- Ո’վ դու չարագործ, -պատասխանեց քահանան,- ես հենց խաղաղություն պահպանելու համար եմ տանջում քեզ, որովհետև դու չես սիրում խաղաղությունը:

Առաջադրանքներ:

ա/ Ստեղծագործաբար վերաշարադրե՛ք առակների բովանդակությունը՝ վերլուծելով առակներում ներկայացված բարոյախոսությունը:

բ/ Համեմատե՛ք և համադրե՛ք առակների կերպարներին և իրական կյանքում հանդիպող մարդկաց՝ բերելով օրինակներ:

գ/ Որևէ առակի բարոյախոսությունն օգտագործե՛ք որպես շարադրանքի վերնագիր և գրե՛ք շարադրություն:

դ/ Հիմնավորե՛ք առակների արդիականությունը՝ տարածության և ժամանակի մեջ՝ բերելով օրինակներ:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ. ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՑԻ

Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի «Վարդան Այգեկցի» դասանյութը, էջ 79-81 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք Վարդան Այգեկցու կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:

բ/ Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:

Կարդացե՛ք «Այծեր և գայլեր», «Եզն ու ձին», «Եկեղեցին և ջրաղացը», «Կտակ վասն գանձի», «Առյուծ և մարդ» առակները և կատարե՛ք կից առաջադրանքները:

ԱՅԾԵՐ ԵՎ ԳԱՅԼԵՐ

Հավաքվեցին մի անգամ այծերը ու գայլերին նամակ ուղարկեցին, թե ինչու ենք մենք դարերով թշնամի իրար հետ, եկեք ապրենք միասին սիրո և խաղաղության մեջ: Ուրախացան գայլերը, իրենց համաձայնությունը տվեցին ու շատ նվերներ ուղարկեցին այծերին, իսկ նամակում գրված էր. «Շատ ճիշտ եք որոշել, հարգարժան այծեր, մեր միջի խառնողը հովիվներն ու շներն են, եթե դուք նրանց վռնդեք ձեր կողմերից, մենք բարեկամներ կլինենք»: Այծերը լսեցին գայլերի խորհուրդը և վտարեցին հովիվներին և շներին: Եվ սկսեցին թռչկոտել ազատության մեջ, ուտել ամենահյութեղ խոտն ու խմել ամենալավ առվակի ջուրը: Իսկ գայլերը սպասեցին հարյուր օր, հավաքվեցին ու խժռեցին հիմար այծերին…

ԵԶԸ ԵՎ ՁԻՆ

Եզը և ձին խոսեցին իրար հետ: Եզն ասաց.

— Դու ով ես, կամ ի՞նչի ես պետք:

Ձին ասաց.

— Ես ձին եմ, ինձ թագավորները, իշխանները և պարոնները զարդարում են ոսկով և արծաթով ու բազմում են ինձ վրա:

Եզն ասաց.

— Ամբողջ աշխարհի բարեկեցությունն եմ ես, որովհետև ես եմ վաստակում, չարչարվում և հոգնում, իսկ դու և քո թագավորն ուտում եք: Բոլոր մարդիկ ուտում են իմ վաստակը, եթե չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն կմեռնեք: Եվ դու երախտամոռ մի լինիր:

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՋՐԱՂԱՑԸ

Եկեղեցին պարծեցավ իր սրբությամբ և ասաց.

— Ես աստծու տաճարն եմ. քահանաներն ու ժողովուրդը դեպի ինձ են գալիս աստծուն աղոթելու և պատարագ մատուցելու: Աստված հաշտվում է աշխարհի հետ և մեղքերին թողություն է լինում:

Այն ժամանակ ջրաղացն ասաց եկեղեցուն.

- Ինչ որ դու ասում ես, արդար է և ճշմարիտ, բայց դու իմ երախտիքը մի՛ մոռանա, որ գիշեր-ցերեկ աշխատում եմ և դատում ա՛յն, ինչ ուտում են քահանաներն ու ժողովուրդը, և ապա քեզ են տալիս աղոթելու և երկրպագելու աստծուն:

ԿՏԱԿ ՎԱՍՆ ԳԱՆՁԻ

Իմաստուն, բայց աղքատ մարդ մը ունէր ծոյլ որդիներ: Մահուան սեմին ան կանչեց որդիները եւ ըսաւ.

-Ո՛վ զաւակներս, նախնիներս մեծ գանձ թաղած են մեր այգիին մէջ եւ ես ձեզի ցոյց պիտի չտամ անոր տեղը: Գանձը կը գտնէ ան, որ շատ կ՚աշխատի եւ աւելի խորունկ կը փորէ:

Հօր մահէն ետք, որդիները սկսան մեծ եռանդով աշխատիլ եւ խորունկ փորել հողը, որովհետեւ իւրաքանչիւրը կ՚աշխատէր ինք գտնել գանձը:

Այգին սկսաւ աճիլ, առատ բերք տուաւ եւ իր գանձերով հարստացուց զանոնք:

ԱՌՅՈՒԾ ԵՎ ՄԱՐԴ

Մի զորավոր առյուծ նստել էր ճանապարհին և տեսակ-տեսակ գազաններ այդ ճանա-պարհով գալիս էին դողալով և անցնում:
Առյուծը հարցրեց նրանց.
- Ինչու՞ եք փախչում և ու՞մ ահից եք զարհուրած փախչում:
Եվ նրանք ասացին.
- Փախի՛ր և դու, որովհետև ահա գալիս է մարդը:
Եվ առյուծն ասաց.
- Ո՞վ է մարդը և ի՞նչ է նա և ի՞նչ է նրա ուժը և նրա կերպարանքը, որ փախչում եք նրանից: Եվ նրանք ասացին.
- Կգա, կտեսնի քեզ և քեզ վայ կլինի:
Եվ ահա յուր հանդից եկավ մի հողագործ մարդ:
Եվ առյուծն ասաց.
- Միթե՞ դու ես այն մարդը, որ փախցնում է գազաններին:
Եվ նա ասաց.
- Այո՛, ես եմ:
Առյուծն ասաց. Ե՛կ կռվենք:
Մարդն ասաց.
- Այո՛, բայց քո զենքերը քեզ հետ են, իսկ իմը՝ տանն են: Ե՛կ, նախ քեզ կապեմ, որպեսզի չփախչես, մինչև ես գնամ առնեմ իմ զենքը և ապա կռվենք:
Առյուծն ասաց.
- Երդվի՛ր, որ կգաս և ես կլսեմ քեզ:
Մարդն երդվեց և առյուծն ասաց.
- Հիմա կապի՛ր ինձ և գնա, շուտ դարձի՛ր:
Մարդը հանեց պարանը և առյուծին պինդ կապով կապեց կաղնու ծառին և ծառից կտրեց մի բիր և սկսեց զարկել առյուծին:
Եվ առյուծը գոչեց.
- Եթե դու մարդ ես, ավելի խիստ և անխնա զարկի՛ր իմ կողերին, որովհետև այս խելքին այդպես է վայել:

Առաջադրանքներ:

ա/ Ստեղծագործաբար վերաշարադրե՛ք առակների բովանդակությունը՝ վերլուծելով առակներում ներկայացված բարոյախոսությունը:

բ/ Առակները ներկայացրե՛ք նկարի տեսքով:

գ/ Ներկայացրե՛ք Վարդան Այգեկցու լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ:

դ/ Համեմատե՛ք և համադրե՛ք առակների կերպարներին և իրական կյանքում հանդիպող մարդկաց՝ բերելով օրինակներ:

Կարդացե՛ք «Իմաստուն զինվոր», «Գող քահանան և այրի կինը», «Աղքատ և Ավետարան», «Այրի կինը և խորթ որդին», «Իշխանը և այրի կինը» և կատարե՛ք կից առաջադրանքները:

ԻՄԱՍՏՈՒՆ ԶԻՆՎՈՐ

Մի իմաստուն զինվոր պատերազմ էր գնում և նա երկու կողմով կաղ էր: Զինվորներից մեկը նրան ասաց.

-Ով ողորմելի, ո՞ւր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող:

Եվ նա ասաց.

-Ով անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու:

ԳՈՂ ՔԱՀԱՆԱՆ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆԸ

Մի քահանա գողացավ այրի կնոջ կովը և ախոռը կապեց: Կինն իմացավ և քահանային ասաց.

- Տե՛ր հայր, հասավ իմ մահվան ժամը, գնանք ախոռ, որ խոստովանեմ մեղքերս:

Եվ այն ժամանակ քահանան կովը տարավ ներսի տուն, այնտեղից ժամատուն և այնտեղից եկեղեցի:

Եվ կինն ասաց.

- Տե՛ր հայր, վերջին խոստովանությունը մահից առաջ պետք է անել եկեղեցում:

Եվ քահանան կովը բեմ բարձրացրեց և վարագույրը քաշեց նրա վրա: Երբ նրանք եկեղեցի մտան և նստեցին, այն ժամանակ կինը բարձրացրեց վարագույրը և կովին ասաց.

- Ո՞վ գարշելի: Ես քեզ կով գիտեի, և այժմ քեզ ո՞վ արեց պատարագիչ, ասա՛ ինձ:

ԱՂՔԱՏ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆ

Մի գյուղացի աղքատ մի գյուղ եկավ և մտավ գյուղի եկեղեցին, որ խարխուլ էր:: Եվ այն աղքատը անձրևաթաց էր և քաղցած, հագել էր պատառոտուն զգեստ և դողում էր, և հոգնել էր ճանապարհից: Ներս մտավ քահանան, սկսեց ժամ ասել: Առավ Ավետարանը և կարդաց այն էջը, ուր գրված էր, թե օտարական էի՝ ընդունեցիք ինձ, մերկ էի՝ հագցրիք ինձ, քաղցած էի կերակրեցիք ինձ, ծարավ էի՝ հագեցրիք ինձ: Այն աղքատը լսեց և ուրախացավ. «Այս ինձ համար է ասված և ահա շուտով կկատարեն իմ կամքը»: Իսկ քահանան ժամն արձակեց և գնաց տուն, աղքատին թողեց եկեղեցու մեջ և հոգ չտարավ նրա

մասին: Եվ աղքատն ասաց.

- Այն գիրն, որ կարդաց նա, սուտ էր:

Եվ առավ Ավետարանը, վրան քար դրեց և սուզեց ջրի մեջ: Եվ քահանան եկեղեցի գալով Ավետարանը չգտավ:

Աղ¬քա¬տին ասաց.

- Ո՞ւր է Ավետարանը:

Եվ աղքատն ասաց քահանային.

- Ի՞նչ ես անում, սուտ Ավետարանը ես տարա ջուրը գցեցի: Եվ քահանան բարկանալով սկսեց ծեծել աղ¬քա¬տին, և աղքատն ասաց.

- Ինչո՞ւ էս ծեծում ինձ, անիրավ, եթե հավատում ես, թե Ավետարանը Աստծու ճշմարիտ խոսքն է, ապա ինչու՞ չես կատարում նրա կամքը: Որովհետև ես օտարական եմ և ինձ չեք ընդունում, մերկ եմ և ինձ չեք հագցնում, քաղցած եմ չեք կերակրում ինձ, ծարավ եմ, ջուր չեք տալիս: Մի՞թե Աստված այդ բաների պակասությունն ուներ և ամենն իրեն համար ասաց:

ԱՅՐԻ ԿԻՆԸ ԵՎ ԽՈՐԹ ՈՐԴԻՆ

Մի այրի կին ուներ տասը այծ և մի որդի: Որդին այծերը տանում էր արոտ, և սայրն ամեն օր մի շերեփ ջուր էր լցնում կաթի մեջ ու փող էր տալիս հարևաններին: Եվ որդին մորն ասաց, թե ինչո՞ւ ես այդպես ջուր լցնում կաթի մեջ ու փոխ տալիս հարևաններին: Մայրն ասաց.

— Որդի՛, մեր կաթը քիչ է, նրա համար եմ անում, որ մեր կաթը մի քիչ ավելի լինի, որ ձմեռը մեզ թացան լինի: Իսկ մի օր, երբ որդին այծերն արոտ էր տարել, երկնքում ծնվեց մի փոքր ամպ, անձրև եկավ, հեղեղ եղավ և այծերը սրբեց լցրեց գետը: Որդին տուն եկավ արևով ու դատարկ, ձեռքին միայն փայտը:

— Որդի՛, ո՞ւր են այծերը, և ինչո՞ւ դու այսօր արևով եկար:

Որդին ասաց.

— Մայրի՛կ, այն մի շերեփ ջուրը, որ խառնում էիր կաթին ու փոխ տալիս հարևաններին, հավաքվեց, հեղեղ դարձավ ու եկավ մեր այծերը տարավ, լցրեց գետը:

ԻՇԽԱՆԸ ԵՎ ԱՅՐԻ ԿԻՆԸ

Մի իշխան կար, խիստ չար ու անիրավ: Նույն քաղաքում ապրում էր մի այրի կին, ու իշխանը, հարկ պահանջելով, նեղում էր նրան, և այրի կինն աղոթում էր, որ իշխանը երկար կյանք ունենա: Գնացին ասացին իշխանին, որ քո չարության համար աղոթում է այրին: Եվ իշխանը եկավ ու ասաց նրան.

- Ես քեզ բարիք չեմ արել, ո՜վ կին, դու ինչու՞ ես աղոթում ինձ համար:

Այրի կինն ասաց.

- Քո հայրը վատ մարդ էր, ես անիծեցի, և նա մեռավ: Հիմա դու նստեցիր նրա տեղը՝ ավելի խիստ ու չար եղար: Եվ այժմ վախենում եմ, որ դու մեռնես ու քո որդին քեզնից ավելի չար լինի:

Առաջադրանքներ:

ա/ Ստեղծագործաբար վերաշարադրե՛ք առակների բովանդակությունը՝ վերլուծելով առակներում ներկայացված բարոյախոսությունը:

բ/ Համեմատե՛ք և համադրե՛ք առակների կերպարներին և իրական կյանքում հանդիպող մարդկաց՝ բերելով օրինակներ:

գ/ Որևէ առակի բարոյախոսությունն օգտագործի՛ր որպես շարադրանքի վերնագիր և գրի՛ր շարադրություն:

դ/ Հիմնավորե՛ք առակների արդիականությունը՝ տարածության և ժամանակի մեջ՝ բերելով օրինակներ:

ե/ Վարդան Այգեկցու առակները համեմատել Գոշի առակների հետ՝ նշելով նմանությունները և տարբերությունները:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ. ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅՈՒՆ, ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ





Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի «Հայ միջնադարյան քնարերգություն, Գրիգոր Նարեկացի» դասանյութը, էջ 62-75 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք Գրիգոր Նարեկացու կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:

բ/ Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:

Կարդացե՛ք «Տաղ Հայտնության» տաղը և կատարե՛ք կից առաջադրանքները:

ՏԱՂ ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ

Ավետիս մեծ՝ սուրբ խորհրդի,
Գաղտնի խորհուրդն հայտնվեց մեզ,
Ավետիս, Հոր լույսն է ծագել
Իր ծոցածին էությունից.
Ավետիս, որ հայտնվեց Աստված
Էակներիս մեջ հողեղեն,
Ավետիս, պետն հրեշտակապետաց՝
Գաբրիելն երկիր է ուղարկվել,

Որ ավետիս տա Սրբուհուն՝
Դստեր Դավիթ թագավորի.
Ավետիս քեզ, Աստվածամայր,
Ուրախ եղիր, Տերն է քեզ հետ:
Ավետիս քեզ, Աստվածամայր,
Կույսդ Մարիամ, տաճար Աստծո
Ավետիս տուր և Ադամին,
Լուծվեց մեղքի անեծքն այսօր.
Ավետիս ձեզ, նահապետներ,
Ավետիս ձեզ, մարգարեներ,
Եղավ լրումն օրենքների.
Ավետիս և քեզ, Բեթղեհեմ:

Առաջադրանքներ:

ա/ Վերաշարադրե՛ք տաղի բովանդակությունը՝ մեկնաբանելով:

բ/ «Տաղ Հայտնության» տաղից դուրս գրե՛ք պատկերավորման միջոցները՝ նշելով տեսակը:

Կարդացե՛ք «Մեղեդի ծննդյան» տաղը և կատարե՛ք կից առաջադրանքները:

ՄԵՂԵԴԻ ԾՆՆԴՅԱՆ

Ծավալվել են աչքերը ծով
Առավոտվա ծովի վրա ծիծաղախիտ,
Ինչպես երկու փայլակնաձև արեգակներ.
Շողն է նման լուսացնցուղ այգաբացի:
Թափվում էին այտերից վառ
Դափնեվարդի ու նռնենու ծաղկաթերթեր.
Գեղաշիտակ իրանից սիրան էր կարկաչում
Հուզավարար կենսատու սեր:
Կամար կապած թևերը գիրգ՝
Երգում էր նա ախորժալուր ու գեղգեղուն,
Ելևէջներն հյուսում իրար.

Շարժվում հանդարտ ու ճեմում էր թիկնեթեկին:
Բերանն երկթերթ, շրթունքներից վարդն էր կաթում.
Լեզվի տավիղն էր քաղցր երգում հուզումնահորդ.
Շողում էին նույն կենսավառ
Սիրով չքնաղ ու գինեթույր
Ծամերն իրենց գիսակներով խոպոպավոր:
Այդ վարսերը համերամ զա՛րդ, համորեն զա՛րդ,
Ոլորք առած եռահյուսակ՝
Բոլորվել են այտերի շուրջ.
Լուսափայլ է ծովը, կարմիր վարդով լցված,
Դաստակներն են մանուշակի ծիրանի փունջ:
Բուրում էր նա կնդրուկի պես
Աստվածային հրով լցված մի բուրվառի.
Ձայնն էր մեղուշ, քաղցրանվագ:
Զարդարված էր պատմուճանով գեղեցկատես,
Որ բեհեզի կապույտ, որդան ու ծիրանի
Գույներով էր ոսկեշողում.
Գոտին կամար, արծաթափայլ,
Ոսկետտուն ու նրբակերտ՝
Պաճուճված էր ակնեղենով շափյուղայի:
Երբ շարժվում էր մարգարտափայլ գեղեցկությամբ,
Քայլերի հետ շողն էր կաթում իր ոտքերից:
Քեզ պսակող Թագավորին
Ու նորածին այն Փրկչին փա՛ռք
Հավիտյանս հավիտենից. ամեն:

Առաջադրանքներ:

ա/ Վերաշարադրե՛ք տաղի բովանդակությունը՝ մեկնաբանելով:

բ/ «Մեղեդի ծննդյան» տաղից դուրս գրե՛ք պատկերավորման միջոցները՝ նշելով տեսակը:

գ/ Տաղից դուրս գրե՛ք հեղինակի կիրառած գեղարվեստական հնարները ու միջոցները՝ նշելով տեսակները:

Կարդացե՛ք «Տաղ Վարդավառի» տաղը և կատարե՛ք կից առաջադրանքները:

ՏԱՂ ՎԱՐԴԱՎԱՌԻ

Գոհար վարդընն վառ առեալ
Ի վեհից վարսիցն արփենից.
Ի վեր ի վերայ վարսից
Ծաւալէր ծաղիկ ծովային:
Ի համատարած ծովէն
Պղպջէր գոյնընն այն ծաղկին.
Երփին երփնունակ ծաղկին
Շողշողէր պըտուղն ի ճղին:
Քրքում վակասիր պտուղն
Սնանէր խուռընն տերեւով.
Տերեւն տաւիղ տուողին,
Զոր երգէր Դաւիթ հրաշալին:
Ի փունջ խուռներամ վարդից
Գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան,
Այդ սոս ու տոսախ ծառերդ
Վարդագոյն ոստս արձակեցին:
Այդ նոճ ու բողբոջ ասրաւսդ
Զարդ առեալ վարդընն շուշանին.
Շուշանընն շողէր հովտին,
Շողշողէր դէմ արեգականն:
Այն հիւսիսային հաւէն
Հով հարեալ գոհար շուշանին.
Յայն հարաւային լեռնէն
Քաղցր օդով ցօղէր շուշանին:
Շուշանընն շաղով լցեալ,
Շող շաղով եւ շար մարգարտով.
Ծաղկունքդ ամէն շաղ առին,

Շաղն՝ յամպէն, ամպն՝ յարեգակնէն,
Աստղունքդ ամէն շուրջ առին
Դէմ լուսնին գունդ-գունդ բոլորին.
Գունդ-գունդ խաչաձեւ գնդակ,
Յօրինուած երկնից շրջանակ:
Փա՛ռք Հօր եւ Որդւոյն յաւէտ,
Սուրբ Հոգւոյն այժմ եւ յաւիտեանս:

Առաջադրանքներ:

ա/ Վերաշարադրե՛ք տաղի բովանդակությունը՝ մեկնաբանելով:

բ/ «Մեղեդի ծննդյան» տաղից դուրս գրե՛ք պատկերավորման միջոցները՝ նշելով տեսակը:

գ/ Տաղից դուրս գրե՛ք հեղինակի կիրառած գեղարվեստական հնարները ու միջոցները՝ նշելով տեսակները:

Կարդացե՛ք «Մատյան ողբերգության» պոեմի 95 գլուխը և կատարե՛ք կից առաջադրանքը:

ԲԱՆ ՂԵ

Սրտի խորվերից խոսք Նարեկացու հետ

Ա

Արեգա՛կ արդար, օրհնյալ ճառագայթ, պատկեր լուսեղեն,
Փափագ անձկալի, անքնին բարձրյալ, անպատում զորեղ,
Բարու բերկրություն, հուսատու տեսիլ, գովյալ երկնավոր,
Թագավոր փառաց, Քրիստոս արարիչ, խոստովանյալ կյանք,
Եղկելուս բազմավրեպ և սխալներով լի այս շարադրանքի
Պակասները դո՛ւ լրացրու խոսքով քո ամենազոր
Եվ այն մատուցիր որպես հաճելի աղերս բարձրյալ Հորդ:
Դու ինձ համար անեծքների փորձության ենթարկվեցիր՝
Կերպարանքովդ նմանվելով ինձ, կենա՛ց օրհնություն,

Բարեխնամ տեսուչ երկնայինների և ողջ երկրայնոց:
Զի թե հանձն առար մեռնել ինձ համար, Աստվա՜ծ բոլորի,
Ո՛րքան ավելի պիտի ուզենաս կարեկցել և այժմ ինձ, տառապալից տագնապահարիս,
Ազգակցիդ մեզ՝ մեզնից մարմնացյալ,
Մեղապարտիս հետ միշտ աղոթելով Հորդ համապատիվ:

Բ

Եվ պատվական արյանդ միջնորդությամբ,
Որ մատուցվում է միշտ առաքչիդ կամքին ի հաճություն՝
Թող վերացվեն վտանգները մեղավոր դատապարտյալիս,
Պարտքերը զիջվեն, ամոթը փարատվի,
Մոռացվեն խայտառակություններն ու դատավճիռն ի բարին փոխվի,
Սատակեն որդերն, ու լացը վերանա,
Դադարի կրճտումն ատամների թող,
Ողբերն սպառվեն,
Արտասուքները ցամաքեն թող որ, սուգը հեռանա,

Գ

Եվ թող բոլորին կյանք կամեցողիդ ու պարգևողիդ գթությո՜ւնը գա,
Թող լույսդ ծագի, փրկությունդ փութա, օգնությունդ հասնի,
Այցելությունդ ժամանի, և ողորմությանդ ցողը կանխահաս
Թող որ շտապի՝ հույժ թշվառությամբ մահվան վիհն ընկած
Իմ ոսկորների պապակ անդաստանը ոռոգելու:
Կենարար արյանդ բաժակն երկնավոր, որ պատարագվում է միշտ, անսպառ
Հանուն ննջեցյալների հոգու փրկության և կենաց,
Թող ծաղկեցնի և պտղաբերի լուսավոր օրվանդ համար մշակված դաշտն իմ մարմնեղեն,
Որպեսզի նրա մեղքով իսպառ մահացած հոգիս,
Քո շնորհիվ, գթա՜ծ, քո մեջ զորացած,
Եվ մեղքերից ազատ, անմահ կենդանությամբ
Նորոգվեմ արդարների հարության օրը՝ Հորիցդ օրհնված,
Որի հետ փառք քեզ և քո Սուրբ Հոգուն
Եվ բարեբանություն վայելչական գոհությամբ,
Այժմ և միշտ և հավիտյանս
հավիտենից. ամեն:

Առաջադրանք:

Բացատրե՛ք, թե ինչպես է արտահայտվել մարդու բարոյական վերածնության՝ բանաստեղծի հույսը ու հավատը «Մատյան ողբերգության» պոեմի 95-րդ գլուխում:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Կարդացե՛ք Ներսես Շնորհալու կենսագրությունը ներկայացնող նյութը և կատարե՛ք կից առաջադրանքները:

ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ՇՆՈՐՀԱԼԻ, Ներսես Դ Կլայեցի, Երգեցող (մոտ 1100, Ծովք դղյակ, Ծոփաց նահանգի Անձիտ գավառ —13.8.1173, Հռոմկլա), հայ բանաստեղծ, մատենագիր, երաժիշտ-երգահան, քաղ. գործիչ: Հայոց կաթողիկոս 1166-ից: Հաջորդել է Գրիգոր Գ Պահլավունուն՝ իր ավագ եղբորը: Իշխան Ապիրատ Պահլավունու որդին է, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ծոռը: Հիմնավոր կրթություն է ստացել Քեսունի մոտ գտնվող Կարմիր վանքի դպրոցում՝ աշակերտելով Ստեփանոս Մանուկ եպիսկոպոսին: Մինչև կաթողիկոս ձեռնադրվելը եղել է Գրիգոր Գ Պահլավունու օգնականն ու խորհրդատուն: 1116-ից ապրել և ստեղծագործել է Կոմմագենեի Տլուք գավառի Ծովք դղյակում, 1150-ից՝ Հռոմկլայում: Ն. Շնորհալու համոզմամբ, ազգային կենտրոնացված պետականության բացակայության պայմաններում հայ եկեղեցին այն միակ հաստատությունն էր, որ պետք է համախմբեր ժողովրդին և կազմակերպեր նրա ինքնուրույն գոյատևումը: Հակադրվելով քրիստոնեական եկեղեցիների միության բյուզանդական ըմբռնմանը, ըստ որի այդ միավորումը պետք է տեղի ունենար բյուզանդական եկեղեցու հովանու տակ, Ն. Շնորհալին գտնում էր, որ դա պետք է իրագործել ոչ թե նրանցից որևէ մեկի գերիշխանությամբ, այլ յուրաքանչյուրի ընդունելի գծերը պահպանելու, տարաձայնությունները փոխադարձ զիջումներով հարթելու և համերաշխության ճանապարհով:

Իբրև քրիստոնեության ջատագով ու պաշտպան՝ Ն. Շնորհալին ունի կրոնական աշխարհայացք: Նա գտնում է, որ ամեն ինչի նախաստեղծ սկիզբը աստվածն է, բայց հասարակական երևույթներին անդրադառնալիս երբեմն դրսևորում է այլ մոտեցում: Նրա համոզմամբ՝ մարդն օժտված է ազատակամ գործունեությամբ և դրանով զգալապես ազդում է հասարակական կյանքի վրա: Ուստի և, ելնելով ընդհանուր բարօրության շահերից, Ն. Շնորհալին հատուկ նշանակություն է տալիս մարդու բարոյական կատարելագործման գաղափարին: Ըստ նրա՝ հանրություն կազմող 5 հիմնական դասերը (հոգևոր, իշխանական, զինվորական, քաղաքային կամ առևտրական և երկրագործ) կոչված են որոշակի դեր խաղալու հասարակական կյանքում, հետևաբար պետք է համագործակցեն խաղաղությամբ: Ն. Շնորհալին հակառակ է տերերի դեմ ուղղված ըմբոստությանը, ինչպես նաև՝ ռամիկների օրինական շահերը ոտնահարող ավատատիրական սանձարձակություններին: Նա ձգտում է կայուն օրենքների և արդարադատության սկզբունքով կարգավորել դասակարգերի հարաբերությունները:

Ն. Շնորհալին թողել է գրական հարուստ ժառանգություն՝ արձակ (մեկնություններ, թղթեր, ճառեր) և չափածո (շարականներ, տաղեր, մեղեդիներ, գանձեր, ներբողներ, հանելուկներ, վիպերգական, վիպաքնարական բնույթի քերթվածներ ևն): Արձակից մասնավորապես հայտնի է «Թուղթ ընդհանրականը» (1166, հրտ. 1788):

Բազմաբովանդակ ու հարուստ է Ն. Շնորհալու չափածոն: Գրիգոր Նարեկացուց հետո նա զարգացրեց հայ չափածո խոսքը թե՛ բովանդակության, թե՛ ձևի առումով: Նա շարականին հաղորդեց քաղաքացիական բովանդակություն արտահայտելով հայրենասիրական տրամադրություններ: Հիշարժան են Աբգար թագավորին, Տրդատ Մեծին ե Աշխեն թագուհուն, Ավարայրի հերոսներին, Ղևոնդյանց նահատակներին նվիրված շարականները: Առանձնապես բարձր արվեստով է ստեղծված վարդանանց հերոսներին նվիրված «Նորահրաշ պսակաւորը»: Դարեր շարունակ լայն ժողովրդականություն են վայելել «Առաւօտ լուսոյ», «Աշխարհ ամենայն», «Զարթիք փառք իմ» երգերն ու արևագալի շարականները, որոնք խոսքի ու երաժշտության զվարթ շեշտերով փառաբանում են բնության և մարդկային ոգու զարթոնքը:

Ն. Շնորհալուց պահպանվել են մանկավարժական-ուսուցողական բնույթի ոտանավորներ, ուղերձներ ու բանքեր, որոնք չունեն իրենց նախօրինակը հայ բանաստեղծության մեջ: Սրանք գրվել են ընթերցողին բարոյապես կրթելու, օգտակար գիտելիքներ տալու

նպատակով: Խրատական ոտանավորներից մի քանիսն ունեն կարճ տողեր՝ բաղկացած 36 հանգավոր տներից, որոնցից յուրաքանչյուրն սկսվում է հայոց այբուբենի հերթական տառի անունով: Բանաստեղծն այս ձևն է ընտրել, ինչպես ինքն է նշել, որպեսզի մանուկները կարողանան հեշտությամբ և՝ նյութը մտապահել, և՝ յուրացնել հայոց գրերի կարգը: Ուշագրավ խրատներ ու գիտելիքներ են պարունակում «Առ եղբորորդին իւր Ապիրատն» ուղերձն ու «Յաղագս երկնի և զարդուց նորա» (1162) տիեզերագիտական պոեմը, որն ստեղծվել է Մխիթար Հերացու խնդրանքով:

Հանելուկի, իբրև գրական առանձին տեսակի ստեղծումը, մշակումը և դասական կատարելագործումը նույնպես կապվում է Ն. Շնորհալու անվան հետ: Նրանից մնացել է ավելի քան 300 հանելուկ, որոնք, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, հեղինակն ստեղծել է աշխարհականների համար, որպեսզի անբովանդակ զրույցներով զբաղվելու փոխարեն մարդիկ ունենան ժամանցի ավելի օգտակար միջոց: Նրա հանելուկների նյութը հիմնականում բնությունն է, կենցաղը, հայոց պատմությունն ու բանահյուսությունը: Այս առումով էլ Ն. Շնորհալու հանելուկները հայ գրականության աշխարհականացման առաջին դրսևորումներից են:

Մեծ է Ն. Շնորհալու «Վիպասանութիւն...» (1121, հրտ. 1643), «Ողբ Եդեսիոյ» (1145, հրտ. 1810), «Բան հաւատոյ» (1151) և «Յիսուս որդի» (1152, հրտ. 1643) մեծածավալ ստեղծագործությունների գրապատմական նշանակությունը: Սրանք գեղարվեստական չափածո խոսքի նոր տեսակներ են, որ դարձան հայ վիպերգական և վիպաքնարական պոեմների նախօրինակները: Վերջին երկու գործերը գրվել են Աստվածաշնչի թեմաների հիման վրա և հղացման ու արվեստի տեսակետից որոշակի հետաքրքրություն են ներկայացնում:

Առանձին հարցերում հետևելով Գրիգոր Նարեկացու և Գրիգոր Մագիստրոսի ավանդներին, Ն. Շնորհալին ի դեմս «Յիսուս որդի» վիպական ողբերգության, հորինել է բոլորովին ինքնատիպ մի երկ, որն առանձնանում է թե՛ բանաստեղծական մտքի թռիչքներով, թե՛ ժամանակի մարդու հոգեբանության լայնակի ու խոր պատկերումով:

«Վիպասանութիւն...»-ը, որի նյութը հայ ժողովրդի պատմության դրվագներն են, գրված է հոմերոսյան դյուցագնավեպերի նմանողությամբ, ունի շեշտված աշխարհիկ բովանդակություն: Պատկերելով ազատագրական պայքարի Փառավոր դրվագները, նախնիների հերոսական քաջագործությունները՝ բանաստեղծի նպատակն է հայրենա-

սիրության ոգով դաստիարակել ընթերցողին: Ն. Շնորհալու հայրենասիրական գաղափարներն առավել հստակ են դրսևորվել «Ողբ Եդեսիոյ» պոեմում, որը նրա գլուխգործոցն է և միաժամանակ հայ քաղաքական պոեզիայի անդրանիկ երկը: Այն քնարավիպերգական ստեղծագործություն է՝ օժտված ծավալուն սյուժեով (Եգեսիա քաղաքի, պաշարումը, պաշտպանությունս, գրավումը, կոտորածն ու կողոպուտը, որոնք 1144-ի վերջերին տեղի ունեցած իրական դեպքեր են): Երկի մեջ հանդես է գալիս նաև քնարական հերոսը՝ որոշակի ապրումներով ու զգացմունքներով, ապագայի նկատմամբ ունեցած հավատով ու լավատեսությամբ: Պոեմը գրված է դիմառնության ձևով. Եդեսիան անձնավորված է իբրև որդեկորույս, որբևայրի մի կին, որը սգում է իր դժբախտությունը: Այս միջոցով հեղինակն ստեղծել է կնոջ կենդանի ու ամբողջական բնավորություն, հորինվածքը դարձրել տպավորիչ ու հուզական: Հասուն արվեստագետի վարպետությամբ են նկարագրված ռազմական գործողությունները: Դիմելով հակադրությունների, բանաստեղծն առավելապես պատկերում է թշնամու բարբարոսական արարքներն ու բնակչության անձնուրաց սխրանքները: Եդեսիայի կործանման նկարագրությամբ բանաստեղծն անդրադարձել է նաև հայ ժողովրդի ճակատագրի հարցերին: Պոեմի սկզբում Եդեսիա-մայրը իրեն ողբակից է հրավիրում Վաղարշապատ և Անի մայրաքաղաքներին՝ հիշեցնելով, որ նրանք նույնպես զրկվել են փառքից ու հզորությունից: Իդեալականացնելով անցյալը, Ն. Շնորհալին ձգտել է կենդանի պահել քաղաքական ազատության հասնելու գաղափարը, տեսնել հայրենի երկրի պետական վերածնունդը: Պոեմն ավարտվում է լավատեսությամբ, որբևայրի մայրը վերջնականապես դժբախտացած չի համարում իրեն՝ երբ լուծվի վրեժը, ինքը նորից կերջանկանա, օտարությունից տուն կդառնան տարագիրները: Ն. Շնորհալին չի ղեկավարվել իրականությանը համակերպվելու քրիստոնեական գաղափարով, այլ գտել է, որ միայն պայքարով ու հաղթանակով է հնարավոր նվաճել ազատությունը: Ն. Շնորհալին շատ է օգտվել ժողովրդական բանահյուսությունից: Մեծ է նրա դերը բանաստեղծական տեխնիկայի և տաղաչափության զարգացման գործում: Նա ստեղծագործել է հայկական չափերի գրեթե բոլոր տեսակներով, որոնց մի մասի ստեղծողը ինքն է: Կանոնավորել է հայերենի տաղաչափությունը՝ բարձրացրել չափածո խոսքի ռիթմիկ-երաժշտական կողմը: Հետևելով Գրիգոր Մագիստրոսին, նա իր մեծ ու փոքր ծավալի գործերը գրել է հանգերով: Այդպիսիք են նաև նրա շարականներն ու հոգևոր տաղերը, որպիսիք մինչ այդ հորինվում էին ազատ չափերով և անհանգ:

Բայց Ն. Շնորհալու մեզ հասած չափածո ժառանգության մեծ մասը միահանգ է: Նա այն կարծիքին է, թե միահանգությունը ար-վեստի կատարելությունն է, թեև որոշ գործեր ստեղծել է փոփոխական հանգերով: Սա արդեն նոր երևույթ էր հայ բանաստեղծության մեջ, որը չէին կարող չնկատել հաջորդ դարերի տաղասացները: Շարունակելով Գավթակ Քերթողի և Գրիգոր Նարեկացու ավանդույթները՝ Ն. Շնորհալին հաճախ գործածել է ակրոստիքոսի, բաղաձայնույթի և առձայնույթի հնարանքները:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք Ներսես Շնորհալու կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:

բ/ Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:

Կարդացե՛ք «Առավոտ լուսո» բանաստեղծությունը և կատարե՛ք կից առաջադրանքները:

Գրաբար

ԱՌԱՒՈՏ ԼՈՒՍՈՅ

Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեայ:
Բխումն ի Հօրէ, բխեա ի հոգւոյս, բան քեզ ի հաճոյս:
Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ, գտող զիս արա:
Դուռն ողորմութեան, դավանողիս բաց, դասեցո վերնոցն:
Երրեակ միութիւն, եղելոց խնամող և ինձ ողորմեա:
Զարթիր, Տէր, յօգնել, զարթո ըզթմրեալս, զուարթնոց նմանիլ:
Էդ հայր անսկիզբն, էակից որդի, է միշտ սուրբ հոգի:
Ընկալ զիս գթած, ընկալ ողորմած, ընկալ մարդասէր:
Թագաւոր փառաց, թողութեանց տուող, թող ինձ ըզհանցանս:
Ժողովող բարեաց, ժողովեա և զիս, ժողովս անդրանկաց:
Ի քէն Տէր հայցեմ, ի մարդասիրէդ, ինձ բժշկութիւն:
Լեր կեանք մեռելոյս, լոյս խավարելոյս, լուծանող ցավոյս:
Խորհրդոց գիտող, խաւարիս շնորհեա, խորհուրդ լուսաւոր:
Ծնունդ Հոր ծոցոյ, ծածկելոյս ստուերաւ, ծագեայ լոյս փառաց:
Կենարար փրկիչ, կեցո ըզմեռեալս, կանգնեա զգլորեալս:
Հաստեա հաւատո, հաստատեա հուսով, հիմնեցո սիրով:

Ձայնիւս աղաչեմ, ձեռօքս պաղատիմ, ձիր բարեաց շնորհեա:
Ղամբարամբ լուսոյ, ղեկավար ճարտար, զօղեալս ամրացո:
Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց, ճեպել ի յերկինս:
Միածինդ Հօր, մոյծ զիս յառագաստ, մաքուր հարսանեացդ:
Յորժամ գաս փառօք, յահագին աւուրն, հիշեա զիս Քրիստոս:
Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, նորոգ զարդարեա:
Շնորհատու բարեաց, շնորհեա զքաւութիւն, շնորհեա զթողութիւն:
Ուրախացո Տէր, ոգւոյս փրկութեամբ, ոյր վասն եմ ի սուգ:
Չար մշակողին, չար սերմանց նորին, չորացո զպտուղն:
Պարգևիչ բարեաց, պարգեւեա իմոց, պարտեացս թողութիւն:
Ջուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ զարտօսր, ջնջել ըզհանցանս:
Ռետինդ քաղցու, ռամ հոգւոյս արբո, ռահ ցոյո ինձ լուսոյ:
Սեր անուն Յիսուս, սիրով քո ճմլեա, սիրտ իմ քարեղեն:
Վասն գթութեան, վասն ողորմութեան, վերստին կեցո:
Տենչալոյդ տեսլեամբ, տուր ինձ յագենալ, Տեր Յիսուս Քրիստոս:
Ռաբունդ երկնաւոր, ոոտեա զաշակերտս, ռաժից երկնայնոց:
Ցող արեան Քո, Տեր, զօղեա ի հոգիս, ցնծասցէ անձն իմ:
Իւիծեալս մեղօք, ւիծեալ աղաչեմ, ւիւսել ինչ բարիս:
Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել, փորձութեանց մեղաց:
Քաւիչ յանցանաց, քաւեա զօրհնաբանս, Քեզ երգել ըզփառս:
Աստուածածնին բարեխօսութեամբ, յիշեա, Տէր, և ողորմեա:

Առաջադրանքներ:

ա/ Վերաշարադրե՛ք «Առավոտ լուսո» բանաստեղծության բովանդակությունը և մեկնաբանե՛ք:

բ/ Ներկայացրե՛ք «Առավոտ լուսո» բանաստեղծության կառուցվածքը, առանձնահատկությունները:

գ/ Ներկայացրե՛ք Շնորհալու լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ:

ԴԱՍԻ ԹԵՄԱ. ՖՐԻԿ

Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի Ֆրիկի կենսագրությանը վերաբերող դասանյութը, էջ 82-88 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք Ֆրիկի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:

բ/ Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:

գ/ Ներկայացրե՛ք ինչ պատմական ժամանակաշրջանում է Ֆրիկը գրել իր բանաստեղծությունները:

դ/ Ներկայացրե՛ք անձնական ինչ ողբերգություն է ապրել Ֆրիկը:

Կարդացե՛ք «Գանգատ» բանատեղծությունը և կատարե՛ք կից առաջադրանքները:

ԳԱՆԳԱՏ

Աստուած արդար և յիրաւի,
Եւ ողորմած յամենայնի.
Հանդէս ունիմ բան մի վիճի,
Թէ դու լսես քո ծառայի:
Այս է զարմանք հիանալի,
Որ կու լինի վերայ երկրի.

Եւ հիացումն ազգի ազգի,
զՈր տեսանեմք ի յաշխարհի:

Գէմ մէկ Ադամ էր ի դրախտին,
Եւ մէկն Եւայ իւր նմանին.
Եւ մէկ բարբառ համազգային,
Մինչև կերեալ պտղոյ ծառին:

Արդ այս բանս է հիանալի,
Եւ առաւել զարմանալի.
Թէ մէկ Ադամ և յԵւայէ
Ո՞րքան ազգեր ծնան յերկրի:

ՈՒրիշ լեզու ամէն մէկի,
Որ մէկ մէկի ո'չ հաւանի.
Որ մէկն է Հայ, մէկ Վրացի,
Մէկն է Տաճիկ, մէկն Ասորի:

Մէկն է ճհուտ Եբրայեցի,
Եւ մին Արաբ, Հագարացի,
Մէկն է Ալան Արևորդի,
Մինն է Թովիչ և Ափխազի:

Մէկն է Քուրդ Քանանացի,
Մինն է Թաթար Թորգոմացի,
Մինն է Մուղալ Խըթայեցի,
Մինն Ջաղաթայ Սըմըրողընդի:

Մինն Ֆռանգ Լատինացի,
Մէկն է Վենէտ և Ջենեցի.
Մէկն Հոռովմ Յունացի,
Եւ միւսն ՈՒռուզ և Հոնացի:

Մինն Դաղմատ Սպանիացի
Ծնունդ սըրբոյ աւազանի.
Հաւատացեալ Հայր և յՈրդի,
ՈՒ երկրպագու Քո սուրբ Խաչին:

Եւ դաւանօղ սրբոյ Կուսին,
Մարիամու Աստուածածնին,
Խոստովանող երրեակ և մի,
Հայր և Որդի և սուրբ Հոգի:

Այլ կամք ի ձեռս անօրինի,
Որ կու վարեն անգին գերի.
Որքա՞ն քակեն եկեղեցի,
Քանի՞ շինեն պիղծ մըզկիթնի:

Քանի՞ կանայս առնեն այրի,
Եւ որքա՞ն որբ քրիստոնէի.
Որքա՞ն արիւն հեղան յերկրի,
Քանի՞ առնեն բան խոտելի:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք «Գանգատ» բանատեղծության մեջ բանաստեղծի արծարածած խնդիրները:

բ/ «Գանգատ» բանաստեղծությունից դուրս գրե՛ք անարդարությունները նկարագրող հակադրությունները:

դ/ Պատմության դասագրքից կարդացե՛ք թաթար-մոնղոլական տիրապետության շրջանի հայ իրականությանը վերաբերող հատվածը և համեմատե՛ք Ֆրիկի «Գանգատի հետ»:

Կարդացե՛ք «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծության հատվածը:

ԸՆԴԴԵՄ ՖԱԼԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Մէկն ի պապանց պարոնորդի,
Մէկն ի հարանց մուրող լինի.
Մէկին հազար ձի և ջորի,
Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի.
Մէկին հազար դեկան ոսկի,
Մէկին ոչ փող մի պղնձի.
Մէկին հազար հատ մարգարտի,
Մէկին ոչ ուլնիկ մի ապիկի…

….

Մէկին հազար ձի և ջորի,
Մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի.
Մէկին հազար դեկան ոսկի,
Մէկին ոչ փող մի պըղնձի.
Մէկին բեհեզ և ծիրանի,
Մէկին բրդէ շալ մի չանկնի.
Մէկին հարամըն յաջողի,
Մէկին հալալն կորուսի.
Մէկն ի զըրկանացն հարստի,
Մէկն յիւրայնոցն աղքատասցի…

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրեք «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծության հատվածում բանաստեղծի արծարածած խնդիրները:

բ/ Հիմնավորե՛ք «Ընդդեմ ֆալաքին» բանաստեղծության արդիականությունը՝ բերելով օրինակներ:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ. ՆԱՀՊԵՏ ՔՈՒՉԱԿ



Կարդացե՛ք «<Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի Նահապետ Քուչակի կենսագրությանը վերաբերող դասանյութը, էջ 89-97 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք Նահապետ Քուչակի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:

բ/ Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:

Կարդացե՛ք Քուչակի հայրենները և կատարե՛ք կից առաջադրանքները:

1.

Էրնեկ ես անո՛ր կու տամ, որ առեր իւր եարն է փախեր,
Ոնց որ ըզկամուրջն անցեր, ջուրն ելեր, զկամուրջն է տարեր.
Ձընիկ - եղեմնիկ եկեր, զոտվընուն հետքն է կորուսեր.
Առեր, ի պաղչան մըտեր, ցորեկով զդընչիկն է պագեր:

2.

Քանի դու ինձի էիր, նայ կանաչ ու ցօղն ի վրայ.
Երբ դու որ յիսնէն ելար, ձիւն երեկ՝ եղեմն ի վըրայ.
Թէ այլվ՛ ի ի յի՛ ս դառնաս ու կենաս խելացդ ի վըրայ.
Երթամ, բարկ արե՛ ւ լինամ, գամ, կանգնիմ կամարիդ վըրայ:
Լոյս ծագեմ ի քո վըրայ, որ սաստի՛ կ ձիւնըն վերայ:

3.

Ուր էիր, ուսկի՞ց եկար, քան զամէն ծաղիկ դու պայծառ.
Եկիր ւ՛ ի հոգիս մըտար, չես ի տար պահիկ մի դադար.
Սըրտիս մէջն ի ժուռ եկար, ւ՛ ելնելու ճարա՛ կ չի գըտար.
Զարկիր ի գըլխուս վերայ, ւ՛ աչերուս ի վար թափեցար:

4.

Այս աստընվորիս վերայ երկու բան ողորմ ու լալի.
Մէկ՝ որ սիրոյ տէ՛ ր լինի, Մէկ՝ որ գա՛ յ ըրողն ու տանի:
Մեռածըն գէմ չէ՛ լալի, որ ունի զիւր խոցն ալանի.
Եկէ՛ ք, զողորմուկս տեսէք, ոչ մեռած է, ոչ կենդանի

5.

Աչերդ է ծովէն առած, եւ ուներդ է ի թուխ ամպէն.
Այդ քո պատկերքդ սուրաթըդ ի վարդին կարմիր տերեւէն.
Ուր որ դու կանգնած լինիս, չէ պատեհ վառեն մոմեղէն.
Ծոցուդ լոյսըն դուրս ծագէ, գէմ ելնէ մեռելն ի հողէն:

6.

Սո՛ ւտ է, որ կ՛ ասեն, եղբա՛ րք, թ՛ ընտանի կաքաւ չի լինի.
Մէկիկ մ՛ ես երէկ տեսայ, - ւ՛ երնեկ է զիր տէրն որ ունի.
Իր օնքն էր ղալամով քաշած, ւ՛ իր բերանըն շաքարով ի լի.
Զմեռելն այլ ի գիրկն առնու, ի ծոցուն հանէ կենդանի:

7.

Լուսի՛ն, պարծենաս, ասես. Լուս կու տամ ես աստընվորիս:
Ահա՛ հողեղէն լուսին ի գըրկիս՛ ու երեսն երեսիս.
Թէ չես աւատալ այս գերուս, յե՛տ տանեմ ըզփէշ կապայիս,
Վախեմ՝ սիրոյ տէր լինիս, լուս պակա՛ս տաս աստընվորիս:

8.

Ի՞նչ անեմ, կամ ի՞նչ լինամ, յո՛ւր տեսնում աղուոր, նայ սիրեմ,
Թէ զյաւիտենից պատճառն եմ ուսել, ես երթամ, ասեմ,
Զաղէկըն այլ գիրկս առնեմ, ու՛ աստուծոյ երթամ, ցըցընեմ,
- Զաղէկըն դո՛ ու ստեղծեցիր, ինձ յէ՞ր մեղք դընես, թէ սիրեմ:

9.

Լուսինն ի սարէն փըրթաւ, ի՛նքն ու իւր աստըղըն ի հիտրաց.
Զաղուորն ի գիրկըս առի, պագ առի երկուքս ի հիտրաց.
Ըստեղծողն իր բերնովն ասաց. Մի՛ թողուր զատ եարդ ի ձեռաց.
Հընցկուն պէլըման աղուոր չե՛մ ստեղծեր երկուքն ի հիտրաց:

10.

Հընցեղ եմ ի քո սիրուդ, որ տըղեկըն ծիծ չէ կերել.
Մարիկըն վաղուց մեռել, ու տըղեկն որբուկ մընացել:
Ջուր տուր իմ ծարաւ լերդիս, քո սիրուդ ի տապն եմ ընկել.
Խօսէ՛, որ առնում իխրար, ես յետի նէֆէսս եմ եկել:

11.

Ես ան հաւերուն էի, որ գետինըն կուտ չուտէի.
Թըռչ՛ի երկընօքն երթ՛ի, թէ սիրոյ ակնատ չընկնէի.
Ակնատն ի ծովուն միջին՝էր լարած ‘ու ես չգիտէի.
Ամէն հաւ ոտօքն ընկնէր, ես ոտօքս ու թեւս աւելի:

12.

Ա՛յ, գընա՛, չի պիտիս դուն ինձ, լուկ պեզա՛ր իմ սիրտս ի քենէ.
Զերայ խոցեցիր դուն զիս, լուկ վերցաւ սիրտըս ի քենէ.
Թէ գան ու զքեզ ջուր ասեն, կամ ջըրին ճարակն ի քենէ՛,-
Տարեկ մի ծառուած կենամ, չի խըմե՛մ կաթիկ մ՛ի քենէ:

13.

Երբ որ ես պըզտիկ էի, կանչեին ինձ ոսկի տըղայ.
Մեծցա, սիրու տէր եղայ, երեսիս գոյնըն կու գընայ.
- Մանկտի՜ք, ձեր արեւն ասեմ, որ սիրուն՝ քարըն չի դիմնայ.
Սիրուն՝ քար ւ՚երկաթ պիտի, պողպատէ դըռնակն ի վերայ:

14.

Այդ քո ստեղծողիդ համար, երբ քայլես, զուներդ մի՛ շարժեր.
Այդ քո աչերուդ խընճերն՝շատ մարդու աիւն է խըմեր.
Խօշ եա՛ր, արեւուդ համար, որբուկ եմ, զիս մի՛ լացըներ.
Տըղայ եմ, չեմ ի կենար, զիս ի քո կրակըդ մի՛ ձըգեր:

15.

Ես աչք ու դու լոյս, հոգի, առանց լո՛յս՝ աչքըն խաւարի.
Ես ձուկ ու դու ջուր, հոգի, առանց ջո՛ւր՝ ձուկըն մեռանի.
Երբ զձուկն ի ջրէն հանեն ւ՚ի այլ ջուր ձըգեն, նայ ապրի,
Երբ զիս ի քենէ զատեն, քան զմեռնելն այլ ճար չի լինի:

16

Հանցգուն եմ ի քո սիրուդ, զինչ ամպերըն կ՚առնեն շառափ.
Զայդ երկիրն ամէն գիտէ, սիրոյ տէր եմ հետ քեզ խարապ.
Այս իմ նենգաւոր աչերս չի կենար մէկ պահ մի պարապ.
Կուլայ, զօրն ըզքե՛զ կ՚ուզէ, չի՛ առներ այլ մարդու տօլապ:

17.

Կօզա՛լ, մի՛ հագնիր կապուտ, մի՛ խաղար ու տար թեւերուդ.
Մի՛ գար ւ՚ի դըռնովն անցիր, մի՛ ճօճար, կօզա՛լ, արեւո~ւդ.
քո հարն ալ շատ վարձկ արեր, շատ կարմունճ կապեր գետերուն.
Դուն ալ մէկ վարձկունք մ՛արա, պագ մը տուր դընչիդ մօտերուն:

18.

Կարմի՛ր ճերմակ երես, ա՜մ քանի՞ դու զիս պիտ էրես.
Քանի որ մէջիս նըստիս, ուներովդ հետ ինձ զըրուցես.
Կոճկեկդ այլ արձակ այնես, ու ճերմա՛կ ծոցըդ ցըցընես.
Կու վախեմ՝ թողուս, ելլես, ու ծոցէդ մահրում մընամ ես:

19.

Ի՞նչ անեմ, կամ ի՞նչ լինիմ, տէր չունիմ, որ գայ զիս ձենէ.
Ո՛չ ունիմ համբերութիւն, որ լըռեմ սահաթ մի քենէ.
Հանցեղ եմ ի քո սիրուդ, զինչ ամառ ծաղիկն ի ջըրէ.
Խեղճըն ի յերկինք ի վեր պաղատէր թք կաթ մի կաթէր:

20.

Իմ սիրտս ի քո վառ սիրուդ՝զէտ աշնան ղազէլ կու դողայ.
Արտսունք ի յերեսս ի վէր՝զէտ գարնան անձրեւ կու ցօղայ.
Հոգիս ի յիսնէ ելաւ, մէկ մի քո ծոցոյդ ճար արա.
Ծոցիկս է ծոցիդ սովոր, այլ ընդ ո՞ր երթայ, մեկ ասա՛:

21.

Պաղչայ մի տընկեր եմ ես, թ՚ի՞նչ աղէկ մորճեր կայի ի ներս.
Սընուցի ւ՚ի հասք բերի, խըլեցին զայն, ու կուլամ ես.
Զէտ մանկակորուստ կաքաւ՝ի լեռներեն ի շուրջ կուգամ ես.
Լըսեր եմ՝ ակնա՛տ ունիս, բեր լարէ՛, գամ ընկնիմ ի ներս:

22.

Երթա՛մ, չի կենա՛մ ի հոս, ուր երթամ, հոն ա՛լ չի կենամ.
Երթամ քանց Հոռոմն ի վար, վըտարի՛մ, այլ իսկի չի գամ.
Թէ գան զիմ տեղըն ասեն, նայ, հեռու եմ, ա՛յլ հեռանամ.
Թէ գան ու զքո տեղն ասեն, նայ, զինճիլն եմ, կըտրեմ ու գամ:

23.

Ե՛ւ, ե՛կ դու ի քո տանէն, զինչ ելնէ արեւն ի մօրէն,
Ծագէ լոյս ի քո ծոցէդ, զինչ գարնան կայծակն ի յամխէն.
Շատ երէց ու աբեղայ իջուցեր քո սէրն ի բեմէն.
զիս այլ սիրու տէր արիր, ու հանիր իմ հօրն ի տանէն:

24.

Դեղնել եմ խընկիդ նըման, գունատել եմ զէտ ըզզաֆրան.
Չի գիտեմ՝ քո սէ՞րդ արել. թէ՞ եկել է օրս ի մահուան:
Ասցին, թէ դու դեղ ունիս, տուր ինձի, որ կենդանամ.
Թէ չէ՝ կու մեռնիմ, գընամ, գան ասեն քեզ մարդասպան:

25.

Իտես, որ դուն պարծեցար, թէ՝ «Ճերմա՛կ ծոցըս քեզ ծառայ»,
Յետև փոշման եղար. խըրատն ո՞վ երետ՝ մեկ ասա:
Ինձ խիփն ու ղուսայ կու գայ՝քո ծոցուդ ա՛յլ մարդ տիրանայ,
Պագնէ զիմ պագած տեղիքն, լուկ դընէ զերեսն ի վերայ:

26.

Թուխ աչք եւ ունքեր ունիս, լայն ճակատ ու կարմիր երես.
Այդ ճերմակդ որ դուն ունիս, ըզշամամ ծընծերդ որ ի ներս,
Մեռնիս, այլ անդին երթաս, զայդ ճերմակ ծոցիկդ ի՞նչ անես,
Զամէնըն որդե՛րն ուտեն, - դու է՞ր զիս մահրում կու պահես:

27.

Ելայ, ես ի քեզ եկի, քեզ յիսնէ կարօտ գիտէի.
ալըս քեզ դիժար թըվաց,- ես ի յիմ միտքս անդիճեցի:
Մի՛ լար, մի՛ տըրտում կենար. մի՛ հաշվիլ զօրըս քեզ տարի.
Ան ոտքն որ ի հոս իբեր, նա կարէ, որ ա՛յլվայ տանի:

28.

Քանի՜ ու քանի՜ ասեմ. «Զիմ եարին կապան կարեցէք.
Արեւն իւր երե՛սք արէք, զլուսընկան աստառ ձեւեցեք.
Թուխ ամպն այլ բամպակ արէք ւ'ի ծաւեն դերձան քաշեցէք.
Աստղերն այլ կոճակ արէք, զիս ի ներս ողկիկ շարեցէք»:

29.

Բանիկ մի ղալատ արի, որ զօձո՛ւն ձագըն սիրեցի.
Խիստ վըստահութիւն արի, որ օձուն դո՛րըն գընացի.
Ձագուն մայրն ի դուրս երեկ, զիս խայթեց, և նըստայ լացի:
Արժա՛ն եմ ես այս լացիս,- ո՞վ եղեր օձուն սիրելի:

30.

Ձաշխարհս ես ի ժուռ եկի, ա՛յ հոգեկ, որ այլ չի մընաց.
Ասցի, թէ գըտնում հանց եար, ա՛յ հոգեկ, որ այլ չէ սիրած:
Եկի հանց եարի մ'առի, որ սիրած է'վ այլւ'ի թողած.
Ձի՞նչ շահ է իմ շատ դատիլս, երբ այլոց ի ծոց ես պառկած:

31.

Այ իմ մարգարտէ շարոց, որ յոտից մատանց հուր ու բոց.
Կըրակն ըզքո մարն երէ, որ տարաւ, երետ զքեզ այլոց.
Դատ ու դատաստան պիտէր ի Հռոմանց տունըն ւ'ի Հայոց,
Երթի, դատաստան կանգնի, չըթողի զքեզ այլ մարդու ծոց

32.

Ով որ ճերմակ ծոց ունի, թող կապոյտ շապիկ հագընի.

Կոճակն այլ արձակ թողու, ով տեսնու՝ սըրտիկն արունի.

Երթամ աղաչեմ զաստուած, լեղակին հունտըն հատանի.

Ո՛չ նա այլ կապոյտ հագնի, ո՛չ մանկան սիրտըն արունի:

Առաջադրանքներ:

ա/ Ընդհանուր գծերով բնութագրե՛ք հայրենների բովանդակությունը՝ ըստ տեսակի:

բ/ Վերաշարադրե՛ք հայրենների բովանդակությունը՝ ներկայացնելով հեղինակի արծարծած խնդիրները:

գ/ Ներկայացրե՛ք Քուչակի լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ:

դ/ Հայրեններից դուրս գրե՛ք համեմատություններ, փոխաբերություններ, մակդիրներ, պատկերավորման այլ միջոցներ:

ե/ Նկարագրե՛ք հայրենների քնարական հերոսուհուն՝ օգտվելով սիրո հայրենների բառապաշարից:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Կարդացե՛ք «Հայ գրականություն 10» հումանիտար հոսքի դասագրքի Սայաթ-Նովայի կենսագրությանը վերաբերող դասանյութը, էջ 97-106 և կատարե՛ք հետևյալ առաջադրանքները:

Առաջադրանքներ.

ա/ Ներկայացրե՛ք Սայաթ-Նովայի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:

բ/ Կազմե՛ք գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:

Կարդացե՛ք Սայաթ-Նովայի խաղերը և կատարե՛ք կից առաջադրանքները:

ԴՈՒՆ Է՛Ն ԳԸԼԽԵՆ ԻՄԱՍՏՈՒՆ …

Դուն է՛ն գըլխեն իմաստուն իս, խիլքտ հիմարին բաբ մի՛ անի,
Էրազումըն տեսածի հիդ միզի մե հեսաբ մի՛ անի,
Յիս խոմ էն գըլխեն էրած իմ, նուրմեկանց քաբաբ մի՛ անի,
Թե վուր գիդիմ բեզարիլ իս, ուրիշին սաբաբ մի՛ անի:

Չը կա քիզ պես հուքմի-հեքիմ. դու Ռոստոմի Զալ՝ թագավուր.
Ասկըտ ասկերումըն գոված՝ հա՛մդ ունիս, գոզալ թաքավուր.
Թե էսանց էլ սուչ ունենամ, գլուխս արա տալ, թագավուր.
Մըտիկ արա քու ստեղծողին՝ նահախ տիղ ղազաբ մի՛ անի:

Յարալուն հեքիմն էնդուր գուզե՝ դի՛ղ տալու է, ցա՛վ տալու չէ.
Քանի գուզե արբաբ ըլի՝ ղուլըն աղին դավ տալու չէ.
Դու քու սիրտըն իստակ պահե, յադի խոսկըն ավտալու չէ.
Աստծու սերըն կանչողի պես դըռնեմետ ջուղաբ մի՛ անի:

Ամեն մարթ չի կանա խըմի՝ իմ ջուրըն ուրիշ ջըրեն է.
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ գիրըն ուրիշ գըրեն է:
Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարափ է, քարուկըրեն է՝
Սելավի պես, առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի՛ անի:

Քանի գոզե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի պակսի.
Թեգուզ ըլիմ, թեգուզ չըլիմ՝ մեջլիսներուն սազ չի պակսի,
Թե դու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարիս մե մազ չի պակսի.
Սայաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի:

ԹԱՄԱՄ ԱՇԽԱՐ ՊՏՈՒՏ ԷԿԱ

Թամամ աշխարհ պտուտ էկա՝ չը թողի Հաբաշ, նազանի,
Չը տեսայ քու դիդարի պէս՝ դուն դիփունէն բաշ, նազանի.
Թէ խամ հագնիս, թէ զար հագնիս, կու շինիս ղումաշ, նազանի.
Էնդու համա քու տեսնողը, ասում է՝ վա՜շ վա՜շ նազանի:
Դուն պատուական ջաուահիր իս, է՛ռնէկ քու առնողին ըլի.
Ով կու գըտնէ՝ ա՛խ չԻ քաշի, վա՛յ քու կորցընողին ըլի.
Ափսո՛ւս վուր շուտով միռիլ է, լուսըն քու ծնողին ըլի.
Ապրիլ էր, մէկ էլ էր բերի քիզի պէս նաղաշ, նազանի:
Դուն է՛ն գլխէն ջուհարդար իս, վըրէդ զարնըշան է քաշած.
Դաստամազիդ թիլի մէջըն մէ շադա մարջան է քաշած.
Աչքիրըդ օսկէ փիալա՝ չարխեմէն փընջան է քաշած.
Թերթերուքդ՝ նիտ ու նաշտար, սուր դալամթըրաշ, նազանի:
Էրեսըդ՝ արսեվար ասիմ, նըման է շամս ու ղամարին.
Բարակ միջքիդ թիրման շալըն նըման է օսկէ քամարին.



Ղալամըն ձիռին չէ կանգնում, մաթ շինեցիր նաղըշքարին.
Եփ նըստում իս՝ թութի ղուշ իս, եփ կանգնում իս՝ ռաշ, նազանի:
Ես է՛ն Սայաթ—Նովասին չիմ վուր աւզի վրայ հիմնանամ.
Աջաբ միզիդ ի՞նչ իս կամում՝ սըրտէդ մէ խաբար իմանամ.
Դուն կըրակ, հագածըդ կըրակ, վո՞ւր մէ կըրակին դիմանամ.
Հնդու ղալամքարու վըրէն ծածկիլ իս մարմաշ, նազանի:

ԴԱՐԴ ՄԻ ԱՆԻ, ՋԱՆ ՈՒ ՋԻԳԱՐ

էսպես դիվանի, լավ տեղ ասած, որը գրոց հայերեն տառ, որը վրաց.
թուրքերեն էլ ուզում էի հետը խառնել, բայց չխառնեցի:

Դարդ մի՛ անի, ջան ու ջիգեար, միտքըդ դիւաց չտեսնէ.
Աչք խաւարի, անգաճ խուլանայ՝ էրեսըդ թաց չտեսնէ:

Վո՛ւնց արեգակը շուղքը տա, վո՛ւնց լուսինը լուս անէ.
Աւալ քու տեսնողը մեռնի՝ քիզ գըլխաբաց չտեսնէ:
Դուն գըլուխըդ մահի կու տաս, յիս էլ քիզ հիդ կու մեռնիմ.
Միր էդնէն թամամ աշխարհըս սով քաշէ, հաց չտեսնէ:

Թէ վուր չգամ ու չտեսնիմ, հազար բաբաթ բան կ'ոսիս.
Քաշկա մարդ վո՛ւնց գայ, վո՛ւնց խօսի, վո՛ւնց քի տըխրած չտեսնէ:

Աստուծու բերնեմէն առնիս մըխիթարիչ սուրբ հոգին.
էլ վաղ մեռնի Սայաթ Նովէն՝ ճիտըդ գըցած չտեսնէ:

ԱՐԻ ՀԱՄՈՎ ՂՈՒԼՈՒՂ ԱՐԱ, ԽԱԼԽԻ ՆՈՔԱՐ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ.

Արի համով ղուլուղ արա, խալխի նոքար Սայաթ-Նովա.
Ամեն մարթ չի՛ կանա ճանգի շահով շըքար, Սայաթ-Նովա,
Ով քիզի լիզի պարքիվե, դուն տու շաքար, Սայաթ-Նովա,
Ղաստ արա՝ շուշետ չը կոտրին, չը խըփին քար, Սայաթ-Նովա:

Թեգուզ դըբրատանըն պահ տաս՝ ծեծով չի խըրատվի խիվըն.
Ինչրու անձնեն չը դուս էհա անախտիլի էն չար դիվըն,
Բեդասըլն՝ ասըլ չի դառնա. թոլով չի սիպտակի սիվըն,
Ծուռըն փետըն չի դըրըստի ռանդան, դուրգար Սայաթ-Նովա:

Թեգուզ իմանաս, գիդենաս աստղերու համբարքըն սիրուն,
Անբարի դուրձըն կորած է՝ կարթա Հարանց վարքրն սիրուն,
Ավիտարանի խոսկիրըն մարքարիտ է, կարքըն՝ սիրուն,
Մի ածի խուզի առշիվըն լալ ու գովհար, Սայաթ-Նովա:

Թե էս կենաց փառքըն չուզիս՝ էն կենաց ալմասըն կու տան.
Թե հոքուտ խաթիր շալ հաքնիս՝ զար քաշած ատլասըն կու տան.
Թե վուր լալով զըխճում անիս՝ անմահացըն մասըն կու տան,
Խոստովանիս արած միխկըտ՝ շանիս ինքար, Սայաթ-Նովա:

Վուր տիղ հարսնիք, վուր տիղըն սուք, վուր տիղ սոյբաթ խաղ է ըլում.
Վուր տիղ ժամ, վուր տիղ պատարաք, վուր տիղ սիրով տաղ է ըլում,
Թե վուր հոքուտ կամքն իս անում, մարմինտ բեդամաղ է ըլում՝
Վո՞ւր մե դարդին կու դիմանաս դուն ջըրատար Սայաթ-Նովա:

Առաջադրանքներ:

ա/ Վերաշարադրե՛ք խաղերի բովանդակությունը՝ ներկայացնելով բանաստեղծի արտահայտած հյուզերը:

բ/ Վերլուծե՛ք և դատողություններ արե՛ք խաղերի հիմնական գաղափարների շուրջ:

գ/ Ներկայացրե՛ք Սայաթ-Նովայի լեզվաոճական առանձնահատկությունները՝ բերելով օրինակներ:

դ/ Դուրս գրե՛ք Թիֆլիսի բարբառին բնորոշ բառերը և մեկնաբանե՛ք:

ե/ Կազմե՛ք բացատրական բառարան՝ ներկայացնելով Թիֆլիսի բարբառին բնորոշ բառերը և դրանց բացատրությունները:

զ/ Սայաթ-Նովայի խրատական տաղերում պատկերված իրականությունը, բարոյական միջավայրը համեմատել ժամանակակից իրականության և մերօրյա բարքերի հետ՝ բանավեճ կազմակերպելով այս հարցի շուրջ:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ՝ ԴԱՆԹԵ ԱԼԻԳԻԵՐԻԻ

Կարդացե՛ք Դանթե Ալիգիերիի կենսագրությունը ներկայացնող նյութը և կատարե՛ք կից առաջադրանքները:

Դանթե Ալիգիերին ծնվել է Ֆլորենցիայի Հանրապետության (ներկայիս Իտալիա) Ֆլորենցիա քաղաքում: Նրա ծննդյան ճշգրիտ ամսաթիվը անհայտ է, թեև ենթադրվում է, որ նա ծնվել է մոտ 1265 թվականին: Դա կարելի է եզրակացնել «Աստվածային կատակերգության» մեջ ինքնակենսագրական պատումներից: Դրա առաջին պատումը՝ «Դժոխքը» սկսվում է «Nel mezzo del cammin di nostra vita» («Մեր կյանքի կեսճանապարհին»), որից կարելի է ենթադրել, որ նա եղել է 35 տարեկան, քանի որ ըստ Աստվածաշնչի՝ մարդու միջին տարիքը 70-ն է, և քանի որ նրա երևակայական ճանապարհորդությունը տեղի է ունեցել 1300 թվականին, նա հավանաբար ծնվել է մոտ 1265 թվականին: Աստվածային կատակերգության Քավարան մասի որոշ տողեր հնարավորություն են ընձեռում կռահելու, որ նա ծնվել է Երկվորյակներ նշանի տակ:

Ծնվել է գվելֆյան ընտանիքում: Հայրը՝ Ալիգիերո Ալիգիերին իրավաբան էր, աշխատում էր քաղաքի բանկային մի բաժանմունքում: Դանթեն մանուկ հասակում կորցնում է մորը, իսկ պատանեկության տարիներին՝ հորը: Մանկուց է նրա մեջ առաջացել սերը գրականության հանդեպ:

Երիտասարդ տարիներից նա ներգրավվում է քաղաքական դեպքերի հորձանապտույտի մեջ: Գվելֆյան կուսակցության կողմից 1289 թվականի հուլիսի 11-ին Կամպալդինոյի ճակատամարտին մասնակցում է որպես հեծյալ զինվոր: Հետո, երբ գվելֆների և

գիբելինների փոխարեն հանդես են գալիս Սևերն ու Սպիտակները, անցնում է վերջիններների կողմը:

Դանթեն հետագայում պետական բարձր պաշտոններ է վարել, կատարել դիվանագիտական պատասխանատու հանձնարարություններ:

Ֆրանսիական թագաժառանգ Կարլ Վալուան զորքով շարժվում է Ֆլորենցիա: Թշնամին ուժեղ էր, սեփական ուժերով դիմադրել հնարավոր չէր: Աղետը կանխելու համար հարկավոր էր շտապ դեսպանություն ուղարկել Հռոմի պապի մոտ: Բոլորի հայացքներն ուղղվում են դեպի Դանթեն: Ջովանի Բոկաչոն՝ Դանթեի առաջին կենսագիրը, պատմում է, որ երբ Դանթեին հարցրին, թե ինքն ինչ կարծիքի է, նա պատասխանեց. «Եթե ես մնամ, ո՝վ կգնա: Եթե ես գնամ, ո՝վ կմնա»:

Դիվանագիտական առաքելությունից Ֆլորենցիա վերադառնալով, նա հանդիպում է Սևերի հաշվեհարդարին: Պատժի ենթակա Սպիտակների ցուցակում էր նաև Դանթեի անունը: Դատավճիռը ձևակերպված էր այսպես. Սևերի դեմ պայքարելու համար 5000 լիր տուգանք, երկու տարվա աքսոր Տոսկանայի սահմաններից դուրս, գույքի բռնագրավում, տունուտեղի հիմնահատակ ավերում: Հրամանի տակ ավելացված էր՝ երեք օրվա ընթացքում ներկայանալ քաղաքագլխին:

Դանթեն չի ներկայանում: Քաղաքագլուխը նախկին հրամանին ավելացնում է. քանի որ դատապարտվածների չներկայանալը նշանակում է հանցանքը ընդունել, նրանց համար նոր դատավճիռ է նշանակում՝ «կրակի վրա այրել, մինչև մահանա»: Սա հրապարակվել է 1302 թվականի մարտի 10-ին: Դանթեի տունը հիմնահատակ քանդում է քաղաքագլխի զինված ասպետների խումբը՝ 150 քարտաշների հետ:

Դանթեն ընտանիքով բռնում է տարագրության տխուր ճանապարհը, այլևս Ֆլորենցիա չի վերադառնում: Աքսորի չորրորդ տարում նամակով հայրենի քաղաք վերադառնալու թույլտվություն է խնդրում, որը անհետևանք է մնում: 1315 թվականի մի օրենքով նա կարող էր վերադառնալ Ֆլորենցիա: Պայմանն այն էր, որ դատապարտյալը երաշխավորագիր ներկայացնի, բանտարկվի, որից հետո բանտարկյալի անարգանքի գլխարկը գլխին, վառած մոմը ձեռքին պիտի գնա Սան-Ջովանի եկեղեցի, խոնարհաբար ծնկի գա, ապաշխարի՝ որպես «մեղքերը քավող հանցագործ»: Դանթեն չէր կարող ընդունել նման ստորացուցիչ պայմանը: 1315 թվականի հոկտեմբերի 15-ին մեկ անգամ ևս որոշում է կայացվել՝ մահ-

վան նոր դատավճիռ, այս անգամ՝ բանաստեղծի երկու որդիների հետ միասին: Դատավճիռը հանդիսավոր կերպով հաստատել է փոխարքան:

Տարագրության տարիներին Դանթեն վերստին քաղաքական իրադարձությունների կենտրոնում է: Ֆլորենցիան Սևերի իշխանությունից ազատագրելու հույսը և մասնատված Իտալիայի միավորման հեռանկարը նա կապում էր գերմանական կայսր Հենրիխ 7-րդի հետ, որ այդ ժամանակ մեծ զորքով շարժվում էր Իտալիա:

Դանթեն չէր հասկանում, որ գերմանական կայսեր գալուստը ազգակործան չարիք է, սակայն գրել է հավատով ու համոզմունքով՝ ղեկավարվելով Ֆլորենցիայի բարօրության, Իտալիայի միավորման ակնկալիքով: Հենրիխի մահից հետո իրական հեռանկարներ չտեսնելով, Ֆլորենցիա վերադառնալու հույսը կորցրած, քաղաքական ասպարեզը թողնում է:

Դանթեն վերջին տարիները անցկացրել է Վերոնայում, ապա Ռավեննայում, որտեղ էլ կնքել է մահկանացուն:

Առաջադրանքներ:

ա/ Ներկայացրե՛ք Դանթե Ալիգիերիի կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:

բ/ Կազմել գրողի գրական դիմանկարը՝ ըստ կենսագրական տեղեկությունների և ժամանակակիցների հուշերի:

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ. «ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆ»

ՀԱՏՎԱԾՆԵՐ

Կարդացե՛ք «Աստվածային կատակերգություն» ստեղծագործությունը/հատվածներ և կատարե՛ք կից առաջադրանքները:

ԴԺՈԽՔ ՄԱՍ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Կիսաճամփին մեր այս կյանքի նախընթաց
Ես կորցրի ճանապարհը ճշմարիտ
Եվ ինձ գտա մի անտառում մթամած:

Օ՜, դժվար է արտահայտել, թե որքան
Վայրի, դժնի ու մռայլ էր անտառն այդ.
Պակուցիչ է հիշելն անգամ սոսկական:

Նա դառնաշունչ ու ահեղ էր մահվան պես.
Բայց ցույց տալու համար բարիքն իմ գտած՝
Կպատմեմ, թե ինչեր տեսա այնտեղ ես:

Չգիտեմ, թե ինչպես մտա ես այնտեղ,
Այնքան էի քնաթաթախ այն պահին,
Երբ բաց թողի ճամփան ուղիղ ու անշեղ:

Բայց երբ հասա ստորոտը մի լեռան,
Ուր փակվում էր այն հովիտը չարաշուք,
Որ իմ սիրտը ահաբեկել էր այնքան,

Վեր նայեցի և տեսա, որ գագաթն իր
Շողերով էր արդեն պատած արևի,
Որ լուսեղեն ուղեցույց է անպատիր:

Այնժամ մի քիչ մեղմեց սոսկումն իմ խորին,
Որ իմ սրտի խոոոչում էր լճացել
Իմ անցկացրած անդոհալի գիշերին:

Եվ ինչպես նա, ով հևհևուն ու թասուն,
Ծովից դեպի ծովեզերքը նետվելով,
Նայում է ետ՝ ալիքներին փոթորկուն,

Այսպես հոգիս, որը տալիս էր դեռ խույս,
Դարձավ ետև՝ նայելու այն անտառին,
Ուրկից ոչ ոք դուրս չի եկել անկորույս:

Երբ քիչ հանգիստ տվի մարմնիս հոգնաբեկ,
Ճամփա ընկա դեպի բարձունքն ամայի,
Հենվելով միշտ իմ պինդ ոտի վրա մեկ:

Եվ ահա ճիշտ իմ վերելքի սկզբին,
Թեթևաշարժ ու ժիրաժիր մի հովազ,
Որ պատված էր պիսակներով երփներփին,

Դեմըս ելավ ու չթողեց բարձրանալ,
Այլ մանավանդ ճամփաս այնպես խափանեց,
Որ քանիցըս ես ուզեցի ետ դառնալ:

Նախաժամն էր արշալույսի վաղորդյան,
Եվ արևն այն աստղերի հետ էր ծագում,
Որոնց հետ էր այնժամ, երբ Սերն աստվածյան

Շարժում տվեց մարմիններին գեղատես:
Գտնելով պահն ու եղանակն հուսալի,
Արդեն այնքան երկյուղ չէի զգում ես

Այն գազանից պատած մորթով գույնզգույն.
Բայց ես նորից համակվեցի սոսկումով,
Երբ երևաց ինձ մի առյուծ հանկարծույն:

Սա կարծես թե իմ վրա էր հարձակվում,
Ահիպարան ու մոլեգին կեցվածքով,
Որից օդն իսկ սարսափահար էր թվում:

Նույն պահին ես տեսա մի գայլ էգ ու չոր,
Որ սովահար ու անհագ էր երևում
Եվ շատերի կյանքն էր դարձրել տանջավոր:

Սա ինձ այնքան պատճառ դարձավ խռովքի
Քստմնելի ու ահռելի իր տեսքով,
Որ ես արդեն կորցրի հույսը վերելքի:

Եվ ինչպես նա, ով դիզում է անընդհատ,
Բայց երբ հանկարծ իր ձեռք բերածն է կորցնում,
Տխրում է և իրեն զգում հույժ վհատ,

Այսպես վհատ ինձ զգացի, հիրավի,
Երբ գայլը ինձ ետ էր քշում դեպ այնտեղ,
Ուր շողերը չեն թափանցում արևի:

Մինչ ես դեպի հովիտն էի թավալվում,
Իմ աչքերին ներկայացավ մի հոգի,
Որը վաղուց ի վեր լռած էր թվում:

Տեսնելով այդ ամայության մեջ նրան,
Ես գոչեցի. «Ողորմիր ու փրկիր ինձ,
Իրական մարդ դու լինես, թե ուրվական»:

Պատասխանեց. «Մարդ չեմ արդ, մարդ եղել եմ.
Ես սերել եմ ծնողներից լոմբարդցի
Եվ ծնվել եմ Մանտովայում աննսեմ.

Ծնվել եմ ուշ, օրոքն Հուլիոս Կեսարի,
Ապրել Հռոմում Օգոստոսի շուքի տակ,
Երբ դեռ կային սուտ աստվածներն ազգերի:

Եղա պոետ և երգեցի փառքն անանց
Անքիսորդու, որ հեռացավ Տրոյայից,
Երբ հրկիզվեց Իլիոնը սիգապանծ:

Բայց դու ինչո՞ւ վայրն ես գնում տանջանքի,
Ինչո՞ւ համար չես ելնում լեռն հեշտավետ,
Որ սկիզբն է, պատճառն ամեն բերկրանքի»:

Ես պատասխան տվի դեմքով պատկառուն.
«Դո՞ւ ես Վիրգիլն և այն աղբյուրը, ուրկից
Պերճ խոսքերի գետ է հորդել լայնահուն:

Օ՛, դու բոլոր պոետների փառք ու լույս,
Արժեն սերն ու տքնությունը հարատև,
Որով հատորդ վերծանեցի խորասույզ:

Դու ես վարպետս ու հեղինակս իմ երեց.
Դու ես լոկ նա, որից էլ ես ստացա
Գողտրիկ ոճը, որը պատիվ ինձ բերեց:

Տես գազանը, որ ճամփաս է խափանում,
Օգնիր ինձ, ո՛վ հռչակավոր իմաստուն,
Նա իմ բոլոր մարմինը դող է հանում»:

Պատասխանեց ի տես իմ մեծ երկյուղի.
«Եթե կուզես պրծնել հովտից այս մռայլ,
Պետք է ընտրես բոլորովին այլ ուղի.

Քեզ չարչարող այդ գայլ-գազանը դժնյա
Ոչ ոքի չի թողնում անցնել իր ճամփով
Եվ տեսածին սպանում է անխնա:

Նա բնությամբ այնքան չար է, գարշելի,
Որ խժռելով չի հագենում երբևէ
Եվ լափելուց հետո քաղցում ավելի:

Մարդիկ շատ կան, որոնց է նա կպչում հար,
Եվ ավելի կշատանան, մինչև որ
Քերծեն գա ու նրան մեռցնի չարաչար:

Սա ոչ հողով, ոչ մետաղով կսնվի,
Այլ պատիվով, իմաստությամբ ու սիրով.
Նա Ֆելտրի և Ֆելտրի միջև կծնվի:

Նա կփրկի ստորանկյալ Իտալիան,
Որի համար զոհ գնացին կարեվեր
Տուռնոն, Նիսոն, Էվրիալն ու Կամիլլան:

Նա կվանի գայլին ամեն քաղաքից,
Մինչև նորից Դժոխքի խորքը խրի,
Ուրկից դուրս էր եկել մղված մախանքից:

Արդ ի խնդիր քո փրկությանն ապահով՝
Հետևիր ինձ, քեզ կլինեմ առաջնորդ
Ու կանցկացնեմ հավերժական կայանով:

Անդ կլսես անհույս ճիչեր ցավագին
Եվ կտեսնես հին հոգիներ տանջահար,
Որոնք երկրորդ մահ են տենչում անձկագին.

Ապա նրանց, որ տանջվում են հաճույքով
Կրակի մեջ, զի հույս ունեն, որ մի օր
Կհամբառնան երանելի հոգվոց քով:

Իսկ սրանց մոտ եթե ելնել փափագես,
Կա ինձանից արժանավոր մի հոգի,
Որին պիտի հեռանալիս հանձնեմ քեզ.

Քանզի կայսրը, որ գերիշխանն է երկնի,
Չի՛ կամենա իմ մուտքը իր քաղաքում,
Զի ես չեղա իր օրենքին ընտանի:

Նա ամենուր տեր է, երկնում՝ տիրակալ.
Նրա քաղաքն ու գահույքը այնտեղ են.
Երջանիկ է նա, ով դառնում է ընտրյալ»:

Եվ ես նրան. «Հայցում եմ քեզ, ո՛վ պոետ,
Հանուն Աստծու, որին դու չես ճանաչել,
Ազատիր ինձ այս վիճակից չարաղետ.

Տար ինձ այնտեղ, որի մասին խոսեցիր,
Որ ես տեսնեմ դարպասը սուրբ Պետրոսի
Եվ նրանց, որ ներկայացրիր տանջակիր»:

Այնժամ շարժվեց, և ես հետքով գնացի:

Առաջադրանքներ:

ա/ Լրացրե՛ք աղյուսակը:

Ի՞նչ տեսա	Ի՞նչ զգացի
Ի՞նչ լսեցի	Ինչ է լինելու հետո

բ/ Ներկայացրե՛ք հատվածի բովանդակությունը:

գ/ Հատվածից դուրս գրե՛ք գաղափարական հարցադրումներ:

ՔԱՎԱՐԱՆ ՄԱՍ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

Արդ, չվելու համար հանդարտ ջրերով՝
Առագաստ է պարզում նավակն հանճարիս,
Որ ետ թողեց մի ծով այնքան ալեխռով

Այժմ ես երկրորդ տեսլարանն եմ երգելու,
Ուր մարդկային հոգիներն են մաքրվում
Եվ արժանի դառնում երկինք ելնելու:

Աստ թող հառնե քերթողությունը մեռյալ,
Ո՛վ սրբազան ու տիրական Մուսաներ.
Թող Կալլիոպեն հաճի փոքր-ինչ վեր կենալ

Ուղեկցելու երգիս ձայնով սրտահույզ,
Որի հարվածն հեգ Անծեղներն զգացին,
Չունենալով ներողության ոչ մի հույս:

Արևելյան շափյուղայի գույնն աղվոր,
Որ անապակ օդի մեջ էր տարածվել
Մինչև պայծառ հորիզոնը հեռավոր,



Նորից սկսեց իմ աչքերը հմայել,
Հենց որ ելա մռայլամած օդից դուրս,
Որ իմ հոգին անդոհով էր համակել:

Սեր ներշնչող մոլորակը գեղապանծ
Ժպտացնում էր արևելքը բովանդակ,
Սքողելով ընթացակից իր Ձկանց:

Ես դարձա աջ մյուս բևեռին նայելու.
Այնտեղ տեսա լուսապայծառ չորս աստղեր,
Որ տեսան լոկ նախամարդիկը հլու:

Նրանց ցոլքից երկինքն հրճվում էր կարծես:
Ո՛վ որբացած հյուսիսային կիսագունդ,
Դու առհավետ նրանց տեսքից զրկված ես:

Երբ ես նրանց դադարեցի նայելուց
Եվ ուղղվեցի դեպի բևեռն հակադիր,
Որտեղ Սայլը անհետացել էր վաղուց,

Իմ մոտ տեսա մի ծերունի մենավոր,
Տեսքից այնքան ակնածության արժանի,
Որքան որդին պարտ է տածել հանդեպ հոր:

Նրա մորուքն երկար էր ու ալեհեր,
Ինչպես էին գլխի մազերը, որոնք
Թափվել էին կրծքին հյուսքով զուգահեռ:

Ճաճանչները չորս սրբազան աստղերի
Իր դեմքն այնքան լույսով էին ողողել,
Որ նա կարծես ցոլացումն էր արևի:

«Այդ ո՞վ եք դուք, որ գետն ի վեր ելնելով,
Խույս եք տվել հավերժական զնդանից,—
Հարցրեց նա մեզ թավ մորուքը շարժելով:—

Ո՞վ բերեց ձեզ, ո՞վ եղավ ձեր լուսատուն,
Որ դուրս ելնեք խորխորատից Դժոխքի,
Ուր տիրում է հավետ խավարը անհուն:

Ի՛նչ, փոխվե՞լ են օրենքները գեհենի,
Կամ երկնքում նոր որոշո՞ւմ է հանված,
Որ եկել եք այստեղ առանց հրամանի»:

Առաջնորդը այնժամ բռնեց ինձ ձեռքով,
Եվ ձայնով ու ակնարկներով հասկացրեց,
Որ ծնրադրեմ նրա առջև հարգանքով:

Ապա նրան. «Ես չեմ եկել ինքնակամ:
Մի կին իջավ երկնքից ու ինձ խնդրեց,
Որ ես սրան իմ օգնությունը ցույց տամ:

Բայց եթե դու կամենում ես ստանալ
Ավելի լայն տեղեկություն մեր մասին,
Ես չեմ կարող քո խնդիրքը զլանալ:

Սա չի տեսել դեռ իր գիշերը վերջին,
Բայց խոլաբար այնքան նրան մոտեցավ,
Որ քիչ մնաց պիտի կորչեր գլխովին:

Ինչպես ասի, ուղարկվեցի նրա մոտ,
Ազատելու համար նրան կորստից,
Դրա համար հարկ էր ճամփան այն ցավոտ:

Ես ցույց տվի նրան մարդկանց ծանրամեղ.
Մտադիր եմ հիմա ցույց տալ այն հոգվոց,
Որ քավում են իշխանությանդ տակ այստեղ:

Ինչպես բերի՝ ասելն երկար կտևի.
Բերի նրան քեզ տեսնելու, լսելու՝
Աջակցությամբ մի զորության վերևի:
Նրա գալը դու ընդունիր լավակամ.
Նա ձգտում է ազատության թանկագին,
Որի համար մարդ զոհում է կյանքն անգամ:

Դու այդ գիտես, քանզի մահը հաճույքով
Ընդունեցիր Ուտիկեում, ուր մի օր
Մարմինդ հառնած կշողշողա ողջ փառքով:

Մենք չենք խախտել օրենքները անվախճան.
Չի նա ողջ է, իսկ ես ազատ Մինոսից,
Պարունակս էլ այն է, որտեղ քո Մարկիան,

Ազնիվ հոգի, կարծես քեզ է փնտրում դեռ.
Հանուն սիրո, որ նա ունի քո հանդեպ,
Բարեհաճիր բավարարել իղձը մեր:

Թույլ տուր անցնենք ոլորտներով քո յոթնյակ.
Իմ երախտիքս առ քեզ նրան կհայտնեմ,
Որի համար դու քեզ կզգաս գոհունակ:

Եվ նա ասաց. «Երկրում էի երբ ցածի,
Մարկիան այնպես իմ աչքի լույսը դարձավ,
Որ ես նրան ամեն ինչով հոգացի:

Արդ քանի որ նա այն կողմն է ժանտ գետից,
Էլ չի կարող ինձ հուզել այն օրենքով,
Որ հաստատվեց, երբ ես ելա այնտեղից:

Բայց եթե քեզ մի սուրբ կին է ուղարկել,
Էլ հարկ չկա շոյող խոսքեր անելու,
Բավ է, որ դու նրա հայցով ես եկել:

Արդ գնա և գոտևորիր դու սրան
Մի կնյունով և երեսն էլ լավ լվա,
Որ չմնա կեղտի ոչ մի հետք վրան:

Վայել չէ, որ նա աչքերով բլշակնած
Ներկայանա պաշտոնեին առաջին,
Որը մեկն է էակներից երկնակյաց:

Այս կղզյակը իր ափերին ստորին,
Ուր կոծում են ալիքները օվկիանի,
Ունի շամբեր հողի վրա սիկային:

Սաղարթավոր կամ կարծրակուռ ոչ մի բույս
Այդտեղ աճել և ուռճանալ չի կարող,
Զի չի թեքվի ալիքներից հողմահույզ:

Դուք այստեղից անկարող եք ետ դառնալ.
Շուտով ծագող արևը ձեզ ցույց կտա,
Թե ինչ ճամփով պետք է լեռը բարձրանալ»:

Այս ասելով անհետացավ ծերունին:
Ես ելնելով առաջնորդիս մոտեցա
Ու հառեցի նրան հայացքըս լռին:

Նա ինձ ասաց. «Հիմա դա ինձ հետևիր.
Գնանք այն կողմ, զի հարթավայրն այնտեղից
Իջնում է դեպ ծովի ափը ցածրադիր»:

Վաղորդյան ժամն արդ ընկրկում էր ետ-ետ
Արշալույսի առջև բացվող, և հեռվից
Նկատեցի ծովածփանքը վետ-վետ:

Գնում էինք հարթավայրով մենավոր,
Ինչպես նա, ով կորցրած ճամփան գտնելով՝
Հրճվում է և իրեն զգում բախտավոր:

Գալով այնտեղ, որտեղ շաղը մանրամաղ
Պայքարում է շողերի հետ արևի,
Եվ որտեղ նա գոլորշանում է դանդաղ,

Վարպետը իր երկու ձեռքերը բացած՝
Մեղմ տարածեց խոտի վրա դալարուն.
Ես, որ նրա դիտումն էի հասկացած,

Մոտեցըրի նրան այտերս արտոսրոտ.
Նա երևան հանեց գույնն իմ բնական,
Որ ծածկել էր Դժոխքը մութ ու մրոտ:

Ապա մեկտեղ եկանք ափը ամայի,
Ուր ոչ ոք չի կարողացել նավարկել
Ու ետ դառնալ ալիքներով ամեհի:

Այստեղ նա ինձ գոտևորեց անդստին:
Բայց ո՛վ զարմանք, այն խոնարհ բույսը, որ նա
Քաղեց-քանցեց, հենց նույն տեղում վերստին

Ընդհուպ բուսավ մի ուրիշ տունկ եղեգնյա:

Առաջադրանքներ:

ա/ Լրացրե՛ք աղյուսակը:

Ի՞նչ տեսա	Ի՞նչ զգացի
Ի՞նչ լսեցի	Ինչ է լինելու հետո

բ/ Ներկայացրե՛ք հատվածի բովանդակությունը:

գ/ Հատվածից դուրս գրե՛ք գաղափարական հարցադրումներ:

ԴՐԱԽՏ ՄԱՍ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ



Փառահեղ լույսն ամեն շարժման ակունքի
Տարածվում է տիեզերքում ու շողում
Մի տեղ լրիվ և մի այլ տեղ մասնակի:

Այն երկնում, որ հեղեղված է այդ լույսով,
Ես եղա և տեսա բաներ այնպիսի,
Որ չեմ կարող վերապատմել բառերով.

Զի մեր միտքը, երբ իր իղձին է հասնում,
Այնքան շատ է խորասուզվում նրա մեջ,
Որ հիշելու կարողությունն է կորցնում:

Սակայն ինչ որ ես կարող եմ վերհիշել
Այն սրբազան արքայության գանձերից,
Արդ կլինի երգերիս նյութը վայել:

Ո՛վ Ապոլլոն, այս երկունքիս մեջ վերջին,
Քո ավյունով դու ինձ այնքան տոգորիր,
Որքան հարկ է, որ ստանամ քո դափնին:

Ցարդ բավ եղավ մի գագաթը Պառնասի,
Բայց հիմա ինձ հարկավոր են երկուսն էլ,
Որ մուտք գործեմ ասպարեզը նոր մարզի:

Մտիր կուրծքըս և շունչըդ ինձ փոխանցիր,
Այն շունչդ հզոր, որ ունեցար դու այնժամ,
Երբ մրցման մեջ դու Մարսիային հաղթեցիր:

Եթե դու ինձ, ո՛վ զորություն աստվածյան,
Այնպես օգնես, ոը կարենամ պատկերել
Թեկուզ ստվերն աբբայության մշտնջյան,

Կմոտենամ ես քո դափնուն բաղձալի,
Պսակվելու համար նրա տերևով,
Քո շնորհիվ և իմ նյութի պանծալի:

Հայր, այդ տունկից այնքան քիչ են քաղում արդ՝
Մեծարելու համար կայսրի, պոետի,
— Ի մեծ ամոթ մարդկանց կամքի հանցապարտ –

Որ անշուշտ դու, աստվածությունըդ դելֆյան,
Կհրճվեիր, եթե մեկը նկրտեր
Արժանանալ այդ տերևին պենեյան:

Փոքրիկ կայծին հետևում է մեծ հրդեհ.
Ինձնից հետո գուցե լինեն լավագույն
Խնդրարկուներ, որոնց Կիրրան ունկնդրե:

Ջահն աշխարհի մարդկանց վրա է ծագում
Մերթ այս կողմից, մերթ այն, սակայն այն կողմից,
Ուր չորս ծիրերն երեք խաչեր են կազմում,

Նա ծագում է ավելի լավ ընթացքով
Եվ ավելի լավ աստղերի բույլի հետ,
Ու երկիրը կաղապարում իր կնքով:

Աստ առավոտ, անդ երեկո էր դարձել,
Եվ քիչ առ քիչ այս կիսագունդը համակ
Պայծառել էր, իսկ այն մյուսը խավարել,

Երբ ես տեսա իմ տիրուհուն, որ դարձած
Դեպի ձախ կողմ, պիշ նայում էր արևին.
Արծիվն անգամ նրան այնպես չէր նայած:

Եվ ինչպես որ շողը ծագում է շողից
Ու վերստին բարձրանում է դեպի վեր,
Ինչպես բազեն, որ թռչում է վեր նորից,

Այսպես նրա սևեռաբիբ նայվածքից
Առաջացավ իմ հայացքը անսովոր,
Որով արփին ես դիտեցի ներքևից:

Այն, ինչ երկրում անկարող ենք մենք անել,
Աստ կարող ենք, ի շնորհիվ տեղանքի,
Որ ի վերուստ մարդկանց համար է հաստվել:

Ես այդ լույսին չտոկացի շատ երկար,
Բայց տեսա, որ նա կայծեր էր արձակում,
Ինչպես երկաթն հանված բովից թեժ ու վառ:

Տվնջյան լույսն հանկարծ աճեց իմ աչքում,
Ինչպես եթե ամենակալ Տերը մեր
Մի նոր արև դրած լիներ երկնքում:

Բեատրիչեն աչքերն հառել էր հավերժ
Երկինքներին, ես էլ նրան հառեցի
Իմ աչքերը զմայլյալ ու այլամերժ:

Նրա տեսքից գերմարդացա ես տակավ,
Գլավկն ինչպես դարձավ աստված ծովային,
Երբ մի տեսակ խոտ համտեսեց ու կերավ:

Գերմարդանալն անհնար է բացատրել,
Սակայն բավ է այս օրինակը նրան,
Ով կարող է այդ իր փորձով հաստատել:

Թե ես միայն հոգով էի համբառնում,
Դու լոկ գիտես, ո՛վ երկինքը վարող Սեր,
Որ բարձրացրիր ինձ քո ուժով անհատնում:

Երբ գնդերը, որ հոլովվում են հավետ,
Իրենց վրա կենտրոնացրին ուշքը իմ
Հնչյուններով իրենց մեղմ ու դաշնավետ,

Տեսա երկինքն այնպես վառված արևից,
Որ այդպիսի լայնատարած լիճ երբեք
Չի գոյացել գետից և կամ անձրևից:

Ձայնն այնքան նոր և լույսն այնքան առատ էր,
Որ ուզեցի դրանց պատճառն իմանալ
Մի մարմաջով, որ իմ մեջ չէր եղել դեռ:

Տիրուհիս, որ միտքըս կարդում էր դյուրավ,
Գոհացնելու համար իղձըս անձկայրյաց,
Նախքան հարց տալս իր բերանը բաց արավ

Եվ բարբառեց. «Թյուր կարծիքովդ ինքըդ քեզ
Բթացնում ես. դու ամեն ինչ կիմանաս,
Եթե քեզնից այդ կարծիքը թոթափես:

Է՛լ երկրում չես, ինչպես կարծում ես դու դեռ:
Շանթն այնպես չի գահավիժել վերից վար,
Ինչպես դու արդ սլանում ես դեպի վեր»:

Եվ ես նրա այս խոսքերով կարճառոտ
Թոթափվեցի տարակույսից առաջին,
Բայց ընկա նոր տարակույսի մեջ կնճռոտ

Եվ ասացի. «Մի զարմանքից հանգչեցի,
Բայց հիմա էլ զարմանում եմ թե ինչպես
Վեր եմ թռչում միջով թեթև տարերքի»:

Եվ այնժամ նա հառաչանքով խորազգաց
Աչքերն ուղղեց դեպի ինձ այն նայվածքով,
Որով մայրն է նայում որդուն ցնորված.

Եվ բացատրեց. «Էությունները համայն
Իրենց միջև ունեն մի կարգ ներդաշնակ,
Որ տիեզերքն Աստծուն դարձնում է նման:

Վեհ էակներն այդ կարգի մեջ ստեղծված
Տեսնում են դրոշմն իմաստության Արարչի,
Որի համար է այն կարգը հաստատված:

Այդ կարգի մեջ գոյակները ամենայն
Հակում ունեն ինչ-որ բանի ձգտելու,
Իրենց տարբեր վիճակների համաձայն,

Եվ լողում են տիեզերքի մեծ ծովով
Դեպի տարբեր հանգրվաններ՝ խթանված
Իրենց վարող մասնահատուկ բնազդով:

Դա է տանում հուրը դեպի գունդը վառ,
Դա է վարում անբանական կենդանուն,
Դա է պահում երկրի զանգվածը ստվար:

Սակայն անբան գոյակները չեն միայն,
Որ ձգտում են դեպի որոշ նպատակ,
Այլև նրանք, որ ունեն միտք բանական:

Այս բոլորի տնօրինողն իմաստուն
Իր լույսով է օծում երկինքը վերին,
Որի մեջ է շրջում երկինքն արագուն:

Եվ հենց այնտեղ, ինչպես վերջին կայանին,
Մեզ տանում է ուժն այն լարի, որ ամեն
Գոյացություն ուղղում է իր վախճանին:

Սակայն ինչպես արվեստի գործն իր ձևով
Հղացվածից մերթ տարբեր է դուրս գալիս,
Նյութի հետ հաշտ չընթանալու պատճառով,

Այսպես էակն իր բնական ընթացքից
Մերթ շեղվում է, իր այն ուժի պատճառով,
Որ կարող է և խոտորվել ճիշտ ճամփից:

Ինչպես շանթը մերթ ամպերի խորքերից
Ցած է վիժում, այսպես խոյանքը մարդու
Մերթ ընկնում է, շեղված պատիր հաճույքից:

Մի զարմանա բարձրանալովդ արդ վերև,
Այնպես ինչպես չես զարմանա տեսնելով
Մի գետակ, որ սարից իջնում է ներքև:

Զարմանալին այն կլիներ քո դեպքում,
Որ դու, անխոչ, գետնին կառչած մնայիր,
Ինչպես եթե բոցը մնար իր տեղում»:

Եվ նա նորից երկինք ուղղեց հայացքն իր:



Առաջադրանքներ:

ա/ Լրացրե՛ք աղյուսակը:

Ի՞նչ տեսա	Ի՞նչ զգացի
Ի՞նչ լսեցի	Ինչ է լինելու հետո

բ/ Ներկայացրե՛ք հատվածի բովանդակությունը:

գ/ Հատվածից դուրս գրե՛ք գաղափարական հարցադրումներ: